OPEN SOCIETY FOUNDATIONS ARMENIA

HELSINKI CITIZENS ASSEMBLY

SIGRID RAUSING TRUST

Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վիճակը

Ուսումնասիրություն
(2007-2015 թթ.)

Վանաձոր
2016

Կազմեց՝ Անահիտ Չիլինգարյան

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց

Նկարը՝ http://www.coe.int/ կայքէջից, թարգմանությունը՝ ՀՔԱՎ

Սույն զեկույցը կարող է օգտակար լինել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիմումատուների համար:

Բովանդակություն

Ներածություն 6

I. ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողության միջազգային մեխանիզմները . 9

ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողությունը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից: ...9

Անդամ պետությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունը 11

Գործով Դիմումատուի կամ Դիմումատուի ներկայացուցչի կողմից ներկայացվող տեղեկատվությունը 14

Հասարակական կազմակերպությունների կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցների կողմից ներկայացվող տեղեկատվությունը 16

II. ՄԻԵԴ վճիռների կատարման վերահսկողության ներպետական մեխանիզմները 17

Ընդհանուր նկարագրություն 17

ՀՀ գործադիր մարմինների դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում 20

ՀՀ օրենսդիր մարմնի դերը վճիռների կատարման գործընթացում 21

ՀՀ դատական մարմինների դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում 23

2007 - 2015 թթ. ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման վիճակը 27

Անհատական բնույթի միջոցառումների իրականացման վիճակը 27

Շարունակական խախտման դադարեցում 27

Մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնում 28

Արդարացի փոխհատուցման վճարում 30

Ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացման վիճակը 35

ՄԻԵԿ 2-րդ հոդված՝ Կյանքի իրավունք 38

ՄԻԵԿ 3-րդ հոդված՝ Խոշտանգումների արգելում 39

ՄԻԵԿ 4-րդ հոդված՝ Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում 49

ՄԻԵԿ 5-րդ հոդված՝ Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 49

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում 53

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի խախտում 58

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-ին կետի խախտում 60

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում 66

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում 70

ՄԻԵԿ 6-րդ հոդված՝ Արդար դատաքննության իրավունք 71

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում 75

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով 88

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետով 93

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի դ) ենթակետ 94
ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում 95
ՄԻԵԿ 7-րդ հոդված՝ Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա 96
ՄԻԵԿ 8-րդ հոդված՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք 96
ՄԻԵԿ 9-րդ հոդված՝ Մտքի, խղճի և կրոնի ազատություն 100
ՄԻԵԿ 10-րդ հոդված՝ Արտահայտվելու ազատություն 104
ՄԻԵԿ 11-րդ հոդված՝ Հավաքների և միավորման ազատություն 107
ՄԻԵԿ 12-րդ հոդված՝ Ամուսնության իրավունք 115
ՄԻԵԿ 13-րդ հոդված Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք 115
ՄԻԵԿ 14-րդ հոդված՝ Խտրականության արգելում 118
ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում 121
ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում 131
ՄԻԵԿ թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում 133
ՄԻԵԿ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում 139

Ամփոփում 142

Առաջարկություններ 147

Հապավումների ցանկ

ԵԽ՝ Եվրոպայի Խորհուրդ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՄԻԵԿ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

ՄԻԵԴ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՀՌԱՀ՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

Ներածություն

2001 թ. հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիան: 2002 թ. ապրիլի 26-ից Կոնվենցիան մտել է ուժի մեջ և անձինք, այդ թվում ՀՀ քաղաքացիները հնարավորություն են ստացել դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Հայաստանի Հանրապետության կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների պաշտպանության նպատակով:

Հայաստանի Հանրապետության վերաբերյալ առաջին վճիռը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացվել է Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով 2007 թ. հունվարի 11-ին (բողոքը ուղարկվել էր 2002 թ. նոյեմբերի 25-ին) և ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 11-ին: Սույն գործով վճռի կատարման հանդեպ վերահսկողության վարույթը ԵԽ նախարարների կոմիտեի կողմից փակվել է 2008 թ. մարտի 27-ին: Այս վճիռը Հայաստանի վերաբերյալ կայացված այն վճիռներից մեկն է, որով բարձրացված խնդիրը լուծվել է մինչ վճռի կայացումը:

Սակայն, վերաբերյալ բազմաթիվ այլ վճիռներով արձանագրած ընդհանուր բնույթի խնդիրները դեռևս չեն լուծվել, չեն ձևավորվել իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որը հանգեցնում է իրավունքների շարունակական խախտումների:

Այս ամենի հետևանք քաղաքացիները ստիպված են լինում նույն իրավունքների պաշտպանության նպատակով կրկին դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով (այսուհետ՝ «Կոնվենցիա») երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը հիմնված է սուբսիդիարության սկզբունքի վրա, համաձայն որի Կոնվենցիայի կիրառման ապահովումը Անդամ Պետությունների պարտավորությունն է, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջամտում է միայն այն դեպքում, երբ Պետությունները թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ[1]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող դիմումների քանակի արագ աճը (2012 թ. դիմումների քանակը 2004 թ կրկնապատկվել է[2]) իր հերթին բացասաբար է

[1] ՄԻԵԴ ընդունելության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույց:
http://www.moj.am/storage/uploads/Admissibility_Criteria.pdf

[2] High Level Conference on the Future of the European Court of Human Rights, Brighton declaration
https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593071

ազդում Կոնվենցիայի արդյունավետության վրա և վտանգում է նախադեպային իրավունքի որակի ու կայունությունը և Դատարանի հեղինակությունը[3]:
Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կոնվենցիայի և Եվրոպական դատարանի երկարաժամկետ արդյունավետության պահպանման հիմնախնդիրը առավել խորը և առանձնակի ուշադրության արժանացավ 2010 թ-ից՝ Ինտերլակենի համաժողովի ընթացքում: Համաժողովի արդյունքում ընդունված Ինտերլակենի հռչակագրով[4] ընդունվեց գործողությունների ծրագիր, որի նպատակն էր քաղաքական ուղղորդում ապահովել Կոնվենցիոն համակարգի երկարաժամկետ արդյունավետության ապահովման նպատակով: Հետագայում, 2011 թ. Իզմիրի[5] և 2012 թ. Բրայթոնի[6] համաժողովների արդյունքում ընդունված համապատասխան հռչակագրերով ամրագրվեցին առավել հստակ քայլեր և ուղղություններ՝ նշված խնդիրների լուծման նպատակով: 2010 թ. ուժի մեջ մտավ Կոնվենցիային կից թիվ 14 Արձանագրությունը, որով սահմանվեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու լրացուցիչ պայմաններ, 2013 թ. մշակվեց թիվ 15 արձանագրությունը, որով նախատեսվում է Կոնվենցիայի նախաբանում ամրագրել սուբսիդիարության սկզբունքը:

Ի լրումն նշված 2015 թ. Բրյուսելի[7] համաժողովի արդյունքում ընդունված Բրյուսելի հռչակագրով, որպես Դատարանի արդյունավետության և հեղինակության բարձրացման կարևոր միջոց է նշել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների լիարժեք կատարման ապահովման անհրաժեշտությունը: Դեռևս 2012 թ. Բրայթոնի հռչակագրով Անդամ պետություններին կոչ արվեց զարգացնել ՄԻԵԴ վճիռների արագ կատարման ազգային մեխանիզմները, վճիռների կատարման վերաբերյալ Գործողությունների ծրագրերը դարձնել հնարավորինս լայնորեն մատչելի, ներառյալ, հնարավորության դեպքում, դրանք ազգային լեզվով հրապարակելու միջոցով: Բրայթոնի հռչակագրով նաև կոչ արվեց բարձրացնել ազգային պառլամենտների վերահսկողական դերը Եվրոպական դատարանի վճիռների կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների արդյունավետության հանդեպ:
Ձեռնարկված փոփոխությունների արդյունքում առավել թափանցիկ և մասնակցային դարձավ Եվրոպային Խորհրդի նախարարների կոմիտեի ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողության իրականացման գործընթացը, գաղտնազերծվեցին ընթացակարգային մի շարք փաստաթղթեր:

---

[3] Interlaken Declaration (թարգմանությունը՝ ՀՔԱՎ)
https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593073
[4] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593073
[5] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593074
[6] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593071
[7] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593072

Պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ինստիտուտների միջոցով ՄԻԵԴ վճիռներով արձանագրված խախտումների վերացման արդյունքում Պետությունը կդառնա Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների ապահովման և պաշտպանության առաջնային օղակ, որով կապահովվի ՄԻԵԿ սուբսիդիարության սկզբունքը:
Վերջին տարիներին ՀՀ-ում ևս ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ՝ ուղղված Եվրոպական դատարանի վճիռների կատարման ազգային մեխանիզմների հզորացմանը: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի վճիռների կատարման արդյունավետ մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում դեռևս ձևավորված:

Ներկայացվող Զեկույցի ուսումնասիրության նպատակն է եղել ամփոփ տեղեկատվություն տրամադրել Հայաստանում ՄԻԵԴ վճիռների կատարման մեխանիզմների, 2007 թ. մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռների կատարման վիճակի վերաբերյալ՝ բացահայտելով և՛ վճիռների կատարման մեխանիզմների, և՛ առանձին վճիռների կատարման նպատակով համակարգային լուծում և ընդհանուր բնույթի միջոցառումներ պահանջող խնդիրը և ներկայացնել դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ: Ուսումնասիրության առարկա են հանդիսացել ՀՀ վերաբերյալ Եվրոպական դատարանի թվով 55 վճիռ, որոնցից մեկը ուսումնասիրության ժամանակահատվածում դեռևս ուժի մեջ չէր մտել: Նշված վճիռներով արձանագրված խախտումները և վճիռների կատարման ընթացքը ամփոփված է «Ամփոփ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության դեմ կայացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և դրանց կատարման վերաբերյալ» Տեղեկանքում[8]:
Զեկույցում մանրամասն անդրադարձ չի կատարվել առանձին գործերով անհատական բնույթի միջոցառումների և արդարացի փոխհատուցման վճարման վիճակին, այլ ուսումնասիրվել է դրանց համակարգային պատկերը:
Զեկույցի պատրաստման ընթացքում օգտագործվել են պաշտոնական աղբյուրներում տեղադրված տեղեկատվությունը, քաղաքացիական հասարակության կողմից կատարված և այլ ուսումնասիրությունները:

[8] http://hcav.am/publications/21-03-2016-04/

I. ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողության միջազգային մեխանիզմները

ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողությունը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ կամ Դատարան) վճիռների կատարման հանդեպ վերահսկողությունը իրականացվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի[9] (այսուհետ՝ նաև ԵԽ ՆԿ) կողմից համապատասխան ընթացակարգերի միջոցով: Նախարարների կոմիտեի նշված լիազորությունը սահմանված է Մարդու իրավունքների և ազատությունների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 46-րդ հոդվածով:

ՄԻԵԿ 46-րդ հոդվածի համաձայն՝

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են: 2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 3-4-րդ մասերի համաձայն՝ 3. Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը: 4. Տվյալ որոշումը հանձնվում է Նախարարների կոմիտեին, որը վերահսկում է այդ որոշմամբ սահմանված բարեկամական կարգավորման պայմանների ի կատար ածելը:

Այսպիսով, պետությունները պարտավոր են կատարել այն վճիռների պահանջները, որոնցում ՄԻԵԴ արձանագրել է խախտում, ինչպես նաև բարեկամական կարգավորմամբ ավարտված գործերով սահմանված պայմանները: ԵԽ Նախարարների կոմիտեն վերահսկողություն է իրականացնում ՄԻԵԴ կողմից իրականացված վճիռների և բարեկամական կարգավորմամբ ավարտված գործերով կայացված որոշումների և ՄԻԵԴ կողմից կայացված վճիռների կատարման նկատմամբ:

Նախարարների կոմիտեի կողմից ՄԻԵԴ վճիռների և բարեկամական կարգավորմամբ ավարտված գործերով կայացված որոշումների կատարման գործընթացի վերահսկողության

[9] http://www.coe.int/execution

իրականացման ընթացակարգը և պայմանները կարգավորվում է Նախարարների կոմիտեի համապատասխան Կանոններով[10]:
Կանոնների համաձայն վճիռների կատարման հանդեպ վերահսկողության շրջանակներում Նախարարների կոմիտեն դիտարկում է, թե արդյոք.
ա) Անդամ պետության կողմից վճարվել է Դատարանի վճռով սահմանված արդարացի փոխհատուցումը, ներառյալ, առանձին գործերով՝ տույժերը,
բ) անհրաժեշտության դեպքում և, հաշվի առնելով Բարձր պայմանավորվող կողմի հայեցողությունը, ընտրել վճռի կատարման միջոցները, արդյոք.
i) ձեռնարկվել են անհատական բնույթի միջոցառումներ, երաշխավորելու, որ խախտումը դադարեցվել է, և հնարավորության սահմաններում վերականգնվել է տուժողի նախկին՝ մինչ կոնվենցիայի խախտման վիճակը,
ii) ձեռնարկվել են ընդհանուր բնույթի միջոցառումներ, արձանագրված խախտումներին նմանատիպ նոր խախտումները կանխարգելելու կամ շարունակական խախտումը դադարեցնելու նպատակով:

Նախարարների կոմիտեի կողմից վերահսկողությունը իրականացվում է մարդու իրավունքների հատուկ հանդիպումների ընթացքում: Նշված հանդիպումների օրակարգերը հրապարակային են:
Վերահսկողության ընթացքում Նախարարների կոմիտեն կարող է ընդունել միջանկյալ բանաձև, պետության կողմից վճռի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և, անհրաժեշտության դեպքում անհանգստություն հայտնելու և/կամ առաջարկություն ներկայացնելու նպատակով: Իսկ այն պահից, երբ Նախարարների կոմիտեն արձանագրում է, որ Բարձր պայմանավորվող կողմը իրականացրել է վճռի կամ որոշման կատարմանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցառումները, այն ընդունում է Եզրափակիչ բանաձև՝ արձանագրելով տվյալ գործի քննության և գործի շրջանակներում իր լիազորությունների ավարտը:
Նախարարների կոմիտեի կողմից վերահսկողությունը իրականացվում է ներքոնշյալ սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա կատարված գնահատման միջոցով.

- անդամ-պետություններ,
- գործով Դիմումատու, Դիմումատուի ներկայացուցչի,
- հասարակական միավորումների
- ՄԻ պաշտպանության ազգային կառույցներ:

[10] https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=999329#RelatedDocuments

Վճիռների կատարման գործընթացում ԵԽ նախարարների կոմիտեին և անդամ պետություններին խորհրդատվությամբ և աջակցությամբ է ապահովում Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ստորաբաժանումը[11]:

Անդամ պետությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունը

Անդամ-պետությունների կողմից տեղեկատվությունը ներկայացվում է Գործողությունների ծրագրի կամ Գործողությունների զեկույցների տեսքով:
Գործողությունների ծրագրի շրջանակներում անդամ պետությունը ներկայացնում է վճռի կատարման նպատակով իրականացման ենթակա քայլերը, ներառյալ ժամանակացույցը, իսկ Գործողությունների զեկույցում՝ ներկայացնել իրականացրած գործողությունները:[12] Միևնույն ժամանակ, պետությունը կարող է ներկայացնել իրականացված գործողությունները և իրականացման ենթակա գործողությունները մեկ ընդհանուր Գործողությունների զեկույցում:
Գործողությունների ծրագրերի և Գործողությունների զեկույցների ներկայացման անհրաժեշտությունը և կարգը սահմանված են Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ստորաբաժանման կողմից 2009 թ. պատրաստված՝ Գործողությունների ծրագրեր - Գործողությունների զեկույցներ. Սահմանումներ և նպատակներ տեղեկանքով[13]: Փաստաթղթով կարևորվում է պետության կողմից գործողությունների ծրագրերի և/կամ Գործողությունների զեկույցների ներկայացումը՝ վճիռների կատարումը արդյունավետ և հնարավորինս կարճ ժամանակում ապահովելու տեսանկյունից: Փաստաթուղթը նաև շեշտադրում է վճռի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսյա ժամկետում Գործողությունների ծրագրի կամ Գործողությունների զեկույցի ներկայացման կարևորությունը:
2015 թ. հուլիսի 16-ին Նախարարների կոմիտեի կողմից հրապարակվեց ՄԻԵԴ վճիռների կատարման վերաբերյալ գործողությունների ծրագրերի և Գործողությունների զեկույցների պատրաստման ուղեցույցը[14]: Նշված փաստաթուղթը մանրամասն նկարագրում է Գործողությունների ծրագրերին և Գործողությունների զեկույցներին ներկայացվող

[11] http://www.coe.int/t/dghl/monitoring/execution/Source/Documents/Docs_a_propos/Mandat_en.pdf
[12] https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH(2009)29&Language=lanEnglish&Ver=rev
[13] https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH(2009)29&Language=lanEnglish&Ver=rev
[14] http://www.coe.int/t/dghl/monitoring/execution/Source/Publications/Vade-mecum/Guide%20for%20the%20drafting%20of%20action%20plans%20and%20reports_06.07.2015_EN.pdf

պահանջները, և անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև որոշ խորհուրդներ է պարունակում ներպետական մակարդակում Գործողությունների ծրագրերը և Գործողությունների զեկույցների կազմելու ընթացակարգի կազմակերպման վերաբերյալ: Փաստաթուղթը կարող է ուղենշային լինել ինչպես անդամ պետությունների, այնպես էլ այլ շահագրգռված անձանց՝ գործով Դիմումատուի, հասարակական կազմակերպությունների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարմինների համար: Փաստաթուղթը նաև հղում է կատարում ԵԽ մի շարք կարևորագույն հանձնարարականներին:

Գործողությունների ծրագրերը և Գործողությունների զեկույցները այն հիմնական փաստաթղթերն են, որոնք չափելի են դարձնում վճռի կատարման համար իրականացվող քայլերի արդյունքները, հնարավորություն են տալիս անդամ պետությանը ունենալ վճռի կատարմանն ուղղված նախապես մշակված քայլերի շարք:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է ՀՀ վերաբերյալ ուժի մեջ մտած և կատարման ենթակա թվով 55 գործ, որոնցից մեկի՝ Շամոյանն ընդդեմ Հայաստանի գործով տեղեկատվության ներկայացման 6-ամսյա ժամկետը լրանում է 2016 թ. ապրիլի 7-ին, ուստի սույն զեկույցում քննարկվող որոշումների թվում այն չի ներառվել: Մինչ 2015 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են, ընդհանուր առմամբ, թվով 16 Գործողությունների զեկույցներ 8 գործերով[15] և 21 Գործողությունների ծրագրեր թվով 11[16] գործերով: Ընդ որում՝ ՀՀ կառավարությունը նշված ծրագրերը կամ զեկույցները ներկայացրել է վճռի ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետի խախտմամբ: Որևէ փաստաթուղթ սահմանված ժամկետի ընթացքում չի ներկայացվել:

ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագրերի և Գործողությունների զեկույցների ներկայացման ժամանակագրությունը ցույց է տալիս, որ այդ ուղղությամբ աշխատանքներն ակտիվացել են 2013-2015 թթ-ին: Այս թվականներին ՀՀ կառավարությունը ուշացրած փաստաթղթեր ներկայացրեց բազմաթիվ գործերով (Տե՛ս Աղյուսակ 1)

[15] Case Of Antonyan V. Armenia, Case Of Sefilyan V. Armenia, Case Of Mamikonyan V. Armenia, Case Of Khachatryan V. Armenia, Case of Stepanyan v. Armenia, Case Of Minasyan And Semerjyan V. Armenia, Case of Mkhitaryan v. Armenia, Case of Tadevosyan v. Armenia, Case Of Kirakosyan V. Armenia, Case Of Galstyan V. Armenia

[16] Case of Tunyan and Others v. Armenia, Case Of Virabyan V. Armenia, Case Of Antonyan V. Armenia, Case Of Sholokhov v. Armenia And Moldova, Case Of Grigoryan v. Armenia, Case Of Poghosyan And Baghdasaryan V. Armenia, Case Of Gabrielyan V. Armenia, Case Of Poghosyan V. Armenia, Case Of Bayatyan V. Armenia, Case Of Ashot Harutyunyan V. Armenia, Case Of Khachatryan v. Armenia,

Աղյուսակ 1. ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագրերի և Գործողությունների զեկույցների ներկայացման ժամանակագրություն													
	2015 թ.		2014 թ.		2013 թ.		2012 թ.		2011 թ.		2010 թ.		Ընդհանուր
	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	գործ	Փաստաթուղթ	գործ	Փաստաթուղթ	Գործ	փաստաթուղթ
Գործողությունների ծրագիր	4	5	6	11	7	7	0	0	4	4	0	0	21
Գործողությունների զեկույց	6	21	8	9	1	4	0	0	0	0	1	3	16
Ընդամենը	10	26	14	20	8	11	0	0	4	4	1	3	

ՀՀ կառավարության կողմից աշխատանքների ակտիվացումը նպաստեց ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ՀՀ դեմ կայացրած բազմաթիվ գործերով վճիռների կատարման հանդեպ վերահսկողության գործընթացի փակմանը: Այսպես, միայն 2015 թ. ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունվեց 7 Եզրափակիչ բանաձև, որոնցով փակվեցին թվով 17 գործեր, ներառյալ այնպիսի գործեր, որոնք երկար ժամանակ քննվել են ԵԽ ՆԿ կողմից (օրինակ՝ Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի[17] գործով վճռի կատարումը քննվում էր դեռևս 2009 թ.): (Տե՛ս Աղյուսակ 2)

Աղյուսակ 2 ԵԽ ՆԿ կողմից եզրափակիչ բանաձևերի ընդունման ժամանակագրություն										
	2015		2014		2013		2011		2008	
	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	Գործ	փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	գործ
Եզրափակիչ բանաձև	7	17	3	5	4	4	4	4	1	1

ՀՀ կառավարության կողմից գործողությունների ծրագրեր, կամ Գործողությունների զեկույցներ չեն ներկայացվել թվով 11[18] գործով, որոնցից 7[19]-ի վերաբերյալ արդեն իսկ

[17] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-89969
[18] Case of Helsinki Committee of Armenia V. Armenia, Case of Nalbandyan v. Armenia, Case of Davtyan v. Armenia, Case of Minasyan v. Armenia, Case of Melikyan v. Armenia, Case of Meltex Ltd And Movsesyan v. Armenia, Case of

կայացվել է Եզրափակիչ բանաձև: Այսինքն, ՀՀ կառավարության կողմից պետք է ներկայացնի Գործողությունների ծրագիր կամ Գործողությունների զեկույց թվով 4 գործով: Այդ գործերն են՝

Աղյուսակ 3. Վճիռներ, որոնց վերաբերյալ ՀՀ-ն Գործողությունների զեկույց կամ Գործողություն ծրագիր չի ներկայացվել		
	6-ամսյա ժամկետը լրացել է	Վերահսկողության տեսակը
Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի	30/12/2015	Ստանդարտ ընթացակարգ
Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի	30/12/2015	Խստացված ընթացակարգ
Դավթյանն ընդդեմ Հայաստանի	20/12/2015	Խստացված ընթացակարգ
Մինասյանն ընդդեմ Հայաստանի	08/01/2015	Ստանդարտ ընթացակարգ

Աղյուսակ 3-ում չեն ներառվել այն գործերը, որոնց վերաբերյալ ներկայացված Գործողությունների ծրագրերը կամ Գործողությունների զեկույցները ոչ ամբողջությամբ են անդրադառնում վճռով արձանագրված բոլոր խախտումների ուղղությամբ իրականացվող գործողություններին:

Գործով Դիմումատուի կամ Դիմումատուի ներկայացուցչի կողմից ներկայացվող տեղեկատվությունը

Գործով Դիմումատուն կամ Դիմումատուի ներկայացուցիչը կարող են տեղեկատվություն ներկայացնել արդարացի փոխհատուցման վճարման կամ անհատական միջոցառումների իրականացման հետ կապված ցանկացած խնդրի վերաբերյալ: (Կանոնների 9-րդ կետի 1-ին մաս):

Sarukhanyan v. Armenia, Case of Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, Case of Nikoghosyan And Melkonyan v. Armenia, Case of Harutyunyan v. Armenia, Case of Mkrtchyan v. Armenia

[19] Case of Melikyan v. Armenia, Case of Meltex Ltd and Movsesyan v. Armenia, Case of Sarukhanyan v. Armenia, Case of Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, Case of Nikoghosyan And Melkonyan v. Armenia, Case of Harutyunyan v. Armenia, Case of Mkrtchyan v. Armenia

ՀՀ դեմ կայացված վճիռներով, ընդհանուր առմամբ Դիմումատուների կողմից ներկայացվել է թվով 4 տեղեկանք (3՝ 2013թ., 1՝ 2014 թ.)՝ 2 գործով[20]: (Աղյուսակ, տող 18, 19, 20, 33)

Աղյուսակ 4. Դիմումատուի կամ Դիմումատու ներկայացուցչի կողմից ներկայացվող հաղորդումների քանակը								
	2015 թ.	2014 թ.		2013 թ.		2012 թ.	2011 թ.	2010 թ.
		փաստաթուղթ	գործ	փաստաթուղթ	Գործ			
Դիմումատուի կամ Դիմումատու ներկայացուցչի կողմից ներկայացվող հաղորդումները	0	1	1	3	2	0	0	0

Տեղեկանքներից 3-ը ներկայացվել են Թունյանն ընդդեմ Հայաստանի[21] գործով և վերաբերել են գործով արդարացի փոխհատուցման վճարման ուշացմանը: Տեղեկանքներով Դիմումատուի ներկայացուցիչը նաև արձանագրել է, որ վճիռը չի թարգմանվել հայերեն լեզվով:
Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի[22] գործով ներկայացված տեղեկանքով[23] Դիմումատուն հայտնել է ԵԽ ՆԿ-ին Դիմումատուի ներգրավմամբ և Դիմումատուի հանդեպ հարուցված շուրջ 8 տարի տևած քրեական վարույթի շարունակման և քրեական վարույթի ուղղությամբ իրավապահ մարմինների կողմից որևէ արդյունավետ գործողություն չիրականացնել մասին:
Ուշագրավ է, որ ՀՀ դեմ կայացված վճիռների կատարման վերաբերյալ Դիմումատուի անունից ներկայացված բոլոր տեղեկանքները ներկայացվել են միևնույն անձի՝ փաստաբան Վահե Գրիգորյանի, մեկ գործով որպես Դիմումատուի, իսկ մեկ այլ գործով որպես Դիմումատուի ներկայացուցիչ:

[20] Case Of Tunyan And Others V. Armenia, Case Of Grigoryan V. Armenia
[21] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-113754
[22] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-112103
[23] https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2322664&SecMode=1&DocId=2028102&Usage=2https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2322664&SecMode=1&DocId=2028102&Usage=2

Հասարակական կազմակերպությունների կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցների կողմից ներկայացվող տեղեկատվությունը

Հասարակական կազմակերպությունները կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցները կարող են ներկայացնել ՄԻԵԴ վճռի կատարման հետ կապված գրավոր հաղորդում (Կանոնների 9-րդ կետի 2-րդ մաս): Մասնավորապես, հասարակական կազմակերպությունների կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցները կարող են տեղեկատվություն ներկայացնել ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող Հաղորդումը չափազանց կարևոր է Կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը և ազդեցությունը գնահատելու տեսանկյունից: Հաղորդումը, որպես կանոն, պետք է ունենան որոշակի կառուցվածք և ձևաչափ: (Մանրամասն տե՛ս Քաղաքացիական հասարակության դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում. Ուղեցույց[24])

Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռներով ներկայացվել են թվով 9 Հաղորդում՝ 5 գործով[25]: Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվել են թվով 7 Հաղորդում, ՀՀ փաստաբանների պալատի կողմից՝ 2 Հաղորդում: Հաղորդումներ են ներկայացվել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի, Իրավունքի գերակայություն ՀԿ-ի, Եհովայի քրիստոնյա վկաների եվրոպական ասոցիացիայի, Սպիտակի Հելսինկյան խումբ ՀԿ-ի կողմից:

ՀՀ կառավարությունը իր հերթին պատասխան է ներկայացրել հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացրած Հաղորդումներին: ՀՀ կառավարությունը ներկայացրել է, ընդհանուր առմամբ թվով 7 պատասխան-արձագանք հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված Հաղորդումներին: Կառավարությունը պատասխան չի ներկայացվել միայն Եհովայի քրիստոնյա վկաների եվրոպական ասոցիացիայի կողմից ներկայացրած 2 Հաղորդումների վերաբերյալ:

[24] http://hcav.am/publications/քաղաքացիական-հասարակության-դերը-միե/

[25] Case Of Antonyan V. Armenia, Case Of Sefilyan V. Armenia, Case Of Mamikonyan V. Armenia, Case Of Khachatryan V. Armenia, Case Of Minasyan And Semerjyan V. Armenia, Case Of Kirakosyan V. Armenia, Case Of Galstyan V. Armenia

Աղյուսակ 5. Հասարակական կազմակերպությունները կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցների կողմից ՄԻԵԴ վճիռների կատարման վերաբերյալ ներկայացված Հաղորդումների ամփոփ պատկերը									
	2015 թ.	2014 թ.		2013 թ.		2012 թ.		2011 թ.	2010 թ.
		փաստա թուղթ	գործ	փաստա թուղթ	գործ	Փաստա թուղթ	գործ		
Հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող տեղեկատվություն	0	2	2	6		1		0	0
ՀՀ փաստաբանների պալատ	0	0		2[26]		0		0	0

II. ՄԻԵԴ վճիռների կատարման վերահսկողության ներպետական մեխանիզմները

Ընդհանուր նկարագրություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման անհրաժեշտությունը բխում է պետության կողմից միջազգային պարտավորությունների կատարման սկզբունքից, որը սահմանված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին և 46-րդ հոդվածներով:

Միևնույն ժամանակ վճիռների կատարման ուղղությամբ պետության համար սահմանված է լայն հայեցողության սահմաններ (margin of appreciation)՝ միջոցների ընտրության հարցում:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ծանրաբեռնվածությունը և մասնավորապես կրկվող գործերի աճը, վերջին տարիներին առավել մեծ չափով խթանվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սուբսիդիարության սկզբունքի գործարկումը: ՄԻԵԴ սուբսիդիարության սկզբունքի ապահովմանը նպաստում է Կոնվենցիայի պահանջների կատարումը ներպետական օրենսդրության և պրակտիկայի մակարդակում՝ ելնելով ՄԻԵԴ դիրքորոշումներից:

Այս առումով կարևորագույն դեր ունեն ՄԻԵԴ վճիռների կատարման ներպետական մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

[26] Տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից

ՀՀ-ն բնորոշվում է որպես մոնիստական իրավական համակարգի երկիր: Մի կողմից համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու պայման՝ վավերացում (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ կետ), մյուս կողմից այն սահմանում էր մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի գերակայությունը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս): 2015 թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններով որոշակի հետընթաց կատարվեց ՀՀ ներպետական իրավական համակարգում միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի կիրառման հարցում:

Այսպես, 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ սահմանադրական փոփոխություններով սահմանվեց,

- վավերացված միջազգային պայմանագրերի և ներպետական օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը (5-րդ հոդվածի 3-րդ մաս),
- հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան,
- հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները (81-րդ հոդվածի 1-ին մաս):

Թվարկված դրույթները էականորեն նվազեցնում են միջազգային իրավունքի աղբյուրների դերը և նշանակությունը ներպետական իրավունքի զարգացման համատեքստում, մասնավորապես որևէ կարգավիճակ չի տրվել միջազգային իրավունքի սկզբունքներին: Թե ինչ բովանդակություն կստանա «հաշվի են առնվում» արտահայտությունը իրավակիրառ պրակտիկայում հետագա փորձը: Պարզ չէ նաև, թե միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան արդյո՞ք հավասարապես ներառում է և փափուկ իրավունքի և կոշտ իրավունքի նորմերը և մեկնաբանությունները՝ խորհրդատվական փաստաթղթերը, հանձնարարականները, թե միայն պարտադիր բնույթ կրող փաստաթղթերը՝ որոշումները, վճիռները:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 2015 թ. փոփոխություններով մի կողմից նվազեցվել է միջազգային իրավունքի դերի նվազեցմանը զուգահեռ սահմանվել է միջպետական մարմինների կողմից ընդունվող փափուկ իրավունքի նորմերի պահանջները հաշվի առնելու պարտավորությունը:

ՀՀ-ն՝ վավերացնելով ՄԻԵԿ-ը, ճանաչում է կոնվենցիայի պահանջների կատարումը ՀՀ տարածքում: Եվրոպական դատարանի վճիռները պարտադիր ուժ ունեն ՀՀ ներպետական իրավական համակարգում: Ինչպես արդեն նշվեց վերևում՝ Դատարանի գործունեության սուբսիդիարության սկզբունքի ապահովման կարևորագույն պայմաններից է Կոնվենցիայի և Դատարանի արդյունավետ կիրարկումը: Այս առումով կարևոր է ներպետական համակարգում մարդու առանձին իրավունքների իրականացման համապատասխանությունը ՄԻԵԴ դիրքորոշումներին անկախ նրանից, թե որ պետության վերաբերյալ գործերով է Դատարանը արտահայտել տվյալ դիրքորոշումը: Մյուս կողմից, ՀՀ-ը պարտավոր է անմիջականորեն ջանք գործադրել ՀՀ դեմ կայացված վճիռներով արձանագրված խնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ:

Այսպիսով, ՀՀ դեմ կայացված դատարանի վճռի կատարումը առնվազն պետք է հանգեցնի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետությանը և նվազեցնի տվյալ իրավունքի նյութական բնույթի խախտումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը ենթադրում է երկու տեսակի միջոցառումների իրականացում՝

1. անհատական բնույթի միջոցառումներ՝ տվյալ անձի իրավունքների վերականգնում, իրավունքի շարունակական խախտման վերացում և արդարացի փոխհատուցման ուղղված գործողություններ (անհատական բնույթի միջոցառումներ),
2. ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ տվյալ խախտմանը հանգեցրած օրենսդրական և կիրառման բնույթի փոփոխություններ:

Նշված բոլոր գործողությունների կատարման համար անհրաժեշտ են ներպետական համապատասխան կառուցակարգեր, որոնցով ապահովվում է վճռի ամբողջական կատարմանն ուղղված բոլոր գործողությունները: Նշված կառուցակարգերով սահմանվում են համապատասխան ազգային մարմինների լիազորությունները և պարտականությունները, որպես պարտադիր պայման սահմանելով այդ գործողությունների իրականացման ընթացքում նրանց հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը:

ԵԽԽՎ-ն «Ազգային պառլամենտները. Եվրոպայում մարդու իրավունքների երաշխավորները» 2011 թ. թիվ 1823 (2011)[27] բանաձևում նշել է «Խորհրդարանական վեհաժողովը վերահաստատում է, որ ԵԽ անդամ պետությունները պատասխանատու են իրենց կողմից ստորագրված մարդու իրավունքների միջազգային դրույթների, մասնավորապես ՄԻԵԿ դրույթների արդյունավետ կիրարկման համար: Այս պարտավորությունը վերաբերելի է բոլոր, թե՛ գործադիր, թե՛ դատական թե՛ օրենսդիր պետական մարմիններին»:

[27] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=18011&lang=en

Ստորև կուսումնասիրվի ՀՀ գործադիր, օրենսդիր և դատական մարմինների դերը ՀՀ իրավական համակարգում ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման հարցում:

ՀՀ գործադիր մարմինների դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում

2003 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՀ կառավարությունը հաստատել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցչի մասին թիվ N 1751-Ն[28] որոշումը: Համաձայն այդ որոշման ՀՀ արդարադատության նախարարության կազմում ստեղծվել է ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի պաշտոն և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչություն:

Լիազոր ներկայացուցչի խնդիրներն են.

ա) ներկայացնել ՀՀ կառավարության շահերը մարդու իրավունքների եվրոպական դատարանում,

բ) վերահսկել ՀՀ կառավարությանը պարտավորեցնող եվրոպական դատարանի որոշումների իրականացման ընթացքը[29]:

Վարչության խնդիրներն են՝ «ապահովելու ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատանքները՝ կապված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների շրջանակներում ներկայացված գանգատների վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումը պատրաստելու, այն Եվրոպական դատարանում ներկայացնելու և պաշտպանելու հետ»[30]:

2014 թ. ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության կազմում ստեղծվեց նոր բաժին՝ վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժինը, որի հիմնական նպատակն է.

1) ապահովել ՀՀ վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների պահանջների կատարումը,

2) ապահովել ՀՀ իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների ներդրումը (մասնավորապես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի,

[28] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38207
[29] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38207
[30] http://moj.am/structures/view/structure/2

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի ու մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթերի մասով):[31]

2015 թ. սեպտեմբերին գործարկվեց Եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչության կայքէջը՝ http://agent.echr.am/: Ըստ պաշտոնական հաղորդագրության կայքէջի նպատակն է առավել արդյունավետ դարձնել Եվրոպական դատարանի վճիռների կատարումը Բրյուսելի հռչակագրի հիման վրա՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի որդեգրած նոր սկզբունքներին համահունչ:[32] Կայքէջը նպատակ ունի ապահովել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի հասանելիությունը և մատչելի դարձնի այդ փաստաթղթերով նախատեսված իրավական պաշտպանության մեխանիզմները: Այն միաժամանակ նպատակ ունի բարձրացնելու քաղաքացիների իրազեկվածության մակարդակը՝ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետ գործադրմանը:

Այնուամենայնիվ կայքէջում տեղադրված հիմնական տեղեկատվությունը անգլերեն լեզվով է Նախարարների կոմիտեին ներկայացված տեղեկանքները, ուղեցույցները և այլն: Այսինքն, կայքէջը դեռևս ամբողջությամբ չի ապահովել ի սկզբը նախանշված նպատակները:*[33]

ՀՀ օրենսդիր մարմնի դերը վճիռների կատարման գործընթացում

«Ներկայացուցչական մարմնի դերը վճիռների կատարման գործընթացում»[34] թիվ 1823 (2011)42 բանաձևով ԵԽԽՎ-ն.

- խրախուսել է պատգամավորներին մշտադիտարկել մարդու իրավունքների չափորոշիչների սահմանումը և կիրառումը ներպետական դատական և վարչական մարմինների կողմից, ինչպես նաև
- սահմանել է մարդու իրավունքների չափորոշիչների ապահովմանն ուղղված պառլամենտական վերահսկողության հիմնարար սկզբունքները:

Մարդու իրավունքների չափորոշիչների սահմանման և կիրառման նկատմամբ ազգային օրենսդիր մարմինը պետք է սահմանի կառուցակարգեր գործադիրի կողմից մարդու

[31] http://moj.am/storage/uploads/Hashvetvutyun_2014.pdf
[32] http://agent.echr.am/events/website-launching.html
[33] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=18011&lang=en

իրավունքների միջազգային դրույթների կիրարկումն ապահովելու նկատմամբ ուշադիր մշտադիտարկելու նպատակով: Ազգային օրենսդիր մարմինները համապատասխան պառլամենտական կառուցակարգերի հիմնումը պետք է նաև հետապնդի մարդու իրավունքների միջազգային պարտավորությունների կատարման հանդեպ վերահսկողության ապահովման նպատակ: Այդ կառուցակարգերին համապատասխան մարմիններ կարող են հանդիսանալ իրավունքների հանձնաժողովները կամ նմանատիպ այլ մարմինները, որոնց լիազորությունների շրջանակը պետք է սահմանված և ամրագրված լինի օրենքով: Լիազորությունների շրջանակը պետք է ներառեն, inter alia.

- Մարդու իրավունքների միջազգային պարտավորությունների հետ համապատասխանության օրենսդրական նախագծերի պարբերական ստուգումը,
- Պահանջել Կառավարությունից ներկայացնել պարբերաբար զեկույց՝ ՄԻԵԴ համապատասխան վճիռների և դրանց կատարման վերաբերյալ,
- Ներկայացնել առաջարկություններ օրենսդրական փոփոխությունների և լրացումների վերաբերյալ,
- Իրենց լիազորությունների սահմաններում կանչել վկաների կամ պահանջել վերաբերելի փաստաթղթերը (subpoena լիազորություններ):

ՀՀ ազգային ժողովի կազմում գործում են մի շարք հանձնաժողովներ[35], որոնք առնչություն ունեն առանձին խմբերի, կամ առանձին ոլորտներում մարդու իրավունքների հիմնախնդիրներին, միևնույն ժամանակ գործում է Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, որոնց ուղղակի պարտականություններն են հանդիսանում մարդու իրավունքների լիարժեք իրացման և իրավունքի գերակայության և օրինականության ապահովման հիմնախնդիրները:

Այնուամենայնիվ թվարկված հանձնաժողովների կանոնակարգերի[36] ուսումնասիրությունը թույլ է տալիս գալ եզրահանգելու, որ տվյալ հանձնաժողովները չունեն որևէ լիազորություն կամ պարտականություն վերահսկողություն իրականացնել ՀՀ-ի կողմից մարդու իրավունքների ոլորտում միջազգային պարտականությունների կատարման վիճակի հանդեպ:

---

[35] Առողջապահության, մայրության, մանկության հարցերով մշտական հանձնաժողով,

[36] Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կանոնակարգ
http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111169&month=all&year=2016&showdoc=kanonakarg&lang=arm
Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի կանոնակարգ

Թե ՀՀ Սահմանադրությամբ, թե ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով նախատեսված չէ մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչների համակարգային իրականացման ապահովման վերահսկողության որևէ պարտականություն:
ՀՀ-ում պառլամենտական վերահսկողության միջոցների բացակայության վերաբերյալ նշվում է նաև 2015 թ. սեպտեմբերի 8-ին ԵԽԽՎ-ի կողմից հրապարակված Պառլամենտների դերը ՄԻԵԴ չափորոշիչների կիրառման հարցում. գործող համակարգերի ամփոփ նկարագիր. թիվ PPSD (2014) 22 rev.[37] տեղեկանքը: Տեղեկանքը ևս մեկ անգամ ընդգծում է ներկայացուցչական մարմինների կարևորությունը և ներկայացնում ԵԽ անդամ պետություններում առկա փորձը, որը կարող է ուսումնասիրվել և ներդրվել նաև ՀՀ-ում:

ՀՀ դատական մարմինների դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում

Դատական մարմիններն իրենց առանձնահատուկ և կարևոր դերն ունեն ՄԻԵԴ վճիռների կատարման և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների կիրարկման հարցում:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրարկման տեսանկյունից այս մարմինների առջև ծառանում են խնդիրների երկու հիմնական շրջանակ. 1. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ չափորոշիչների կիրառումը ներպետական դատարանների կողմից, և 2. ՄԻԵԴ այն վճիռների կատարումը և չափորոշիչների կիրառումը, որոնք կայացվել են անմիջականորեն ՀՀ դեմ:

1. «Սկզբունքների տեսանկյունից պարզ է, որ ՄԻԵԴ կողմից տրված մեկնաբանությունները անքակտելիորեն կապված են ՄԻԵԿ դրույթներին և, հետևաբար նույնչափ պարտադիր են, որքանով Կոնվենցիայի դրույթները»:[38] Միևնույն ժամանակ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրառումը կապված է նաև մի շարք ռիսկերի և հիմնախնդիրների: Տեխնիկական բնույթի առավել տարածված խնդիր է ՄԻԵԴ վճիռների մատչելիությունը և հասանելիությունը ազգային դատավորների և իրավաբանների համար՝ մի կողմից օտար լեզուների չիմացությունը, մյուս կողմից թարգմանված վճիռների փոքր թիվը: Կարևոր խնդիր է համապատասխան մասնագիտական կարողությունների զարգացումը ՄԻԵԴ վճիռները բովանդակային մեկնաբանելու հարցում: Համակարգային խնդիր է հանդիսանում

[37] http://website-pace.net/documents/10643/695436/20142110-PPSDNotefondstandardsCEDH-EN.pdf/113ad45b-7ffd-4ee7-b176-7fb79ad32f93
[38] Guidance by Supreme Courts to lower courts on the requirements of the European Convention on Human Rights. Paul Lemmens
http://www.coe.int/t/dghl/standardsetting/cddh/Proceedings/Belgrade_PROCEEDINGS&COVER.pdf

ներպետական օրենսդրության անհամապատասխանությունը ՄԻԵԴ նախադեպային իրավունքով սահմանված չափորոշիչներին: Հատկապես այս խնդրի առկայության դեպքում, երբ օրենսդրությունը կամ պաշտոնապես որդեգրած քաղաքականությունը չի համապատասխանում ՄԻԵԴ չափորոշիչներին, լուրջ խոչընդոտ են հանդիսանում ազգային դատարանների կողմից ՄԻԵԴ չափորիչների կիրառումը դատական պրակտիկայում ապահովելու համար: Մեկ այլ խնդիր է ՄԻԵԴ որոշ վճիռների ոչ հստակությունը, ՄԻԵԿ-ի կենդանի փաստաթուղթ լինելը, ինչպես նաև ՄԻԵԴ կողմից մշակույթային առանձնահատկությունների սկզբունքի կիրառումը:[39]

ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է ՄԻԵԴ վճիռների մեկնաբանությունների պարտադիր լինելը ներպետական դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործերի քննության ընթացքում (ՀՀ դատական օր-ի 15-րդ հոդված):
Այսպիսով, մի կողմից ելնելով միջազգային իրավունքի պայմանագրի կատարման պարտավորության սկզբունքից, մյուս կողմից՝ ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումներից (ՀՀ դատական օր-ի սկզբունքի 15-րդ հոդված), ՄԻԵԴ նախադեպային իրավունքը պարտադիր է ՀՀ դատարանների կողմից կիրառման համար: Նշենք, որ միջազգային իրավունքի գերակայության սկզբունքի համաձայն ՄԻԵԴ վճիռներով սահմանված չափորոշիչների և ներպետական օրենսդրական կարգավորումների միջև հակասության դեպքում պետք է կիրառվեն ՄԻԵԴ չափորոշիչները:
Կարելի է արձանագրել, որ թեև այլ երկրների վերաբերյալ ՄԻԵԴ կողմից ընդունված, սակայն պիլոտային և կարևորագույն նշանակություն ունեցող վճիռները թարգմանվում են հայերեն լեզվով, այնուամենայնիվ ՀՀ-ում ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամբողջական կիրառման համար ՀՀ դատավորները և նրանց օգնականները, իրավաբանները պետք է տիրապետեն առնվազն անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներին և ՄԻԵԴ վճիռների մեկնաբանման կարողությունների: Այստեղ որպես դրական գործոն պետք է արձանագրել նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի ուսուցման և վերապատրաստման ծրագրերում ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրմանը նվիրված առարկաների ներառված լինելը: Այնուամենայնիվ, առավել բարդ է ՀՀ դատարանների համար ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մեկնաբանությունը մշակույթային առանձնահատկությունների սկզբունքի և ՄԻԵԿ կենդանի փաստաթուղթ լինելու տեսանկյունից: ՄԻԵԴ նախադեպերի կիրառման ընթացքում վրա բացասական ազդեցություն կարող է ունենալ դատական իշխանության կախվածությունը գործադիր մարմիններից, առաջին և երկրորդ ատյանների դատարանների

[39] Evaluation of supposed obstacles to an effective implementation of the European Convention on Human Rights by national courts. Jeremy McBride
http://www.coe.int/t/dghl/standardsetting/cddh/Proceedings/Belgrade_PROCEEDINGS&COVER.pdf

կախվածությունը Վճռաբեկ դատարաններից, ինչպես նաև ընտրողական արդարադատության պրակտիկան:

Ներպետական դատարանների կողմից ՄԻԵԴ չափորոշիչների կիրառման կարևոր ցուցիչ է բարձրագույն դատարանի պրակտիկան և ուղերձները: Այսպես, մեր ուսումնասիրությունը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը իր որոշումների մոտ 30%-ում վկայակոչել է ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, որոնցում առավել մեծ թիվ են կազմում այլ երկրների դեմ կայացված վճիռները:
Ի դեպ, ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ որևէ կերպ չի անդրադարձել ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրառման խնդիրներին:

2. Ներպետական դատարաններում ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռների կիրառման ընթացքում կարևոր հիմնախնդիրն է, թե մինչ վճռով նախատեսված համակարգային խախտումների վերացումը (օրենսդրական փոփոխությունների կատարումը) դատարանները ինչպես պետք է կիրառեն տվյալ վճռով սահմանված դիրքորոշումները: Այս առումով ՄԻԵԴ դիրքորոշման հաշվի չառնելը կարող է հանգեցնել իրավունքի խախտմանը, հետևաբար նաև վճռի ոչ ամբողջական կատարմանը և կնպաստի նոր բողոքների ներկայացմանը ՄԻԵԴ-ին:
Այս համատեքստում պետք է արձանագրել, ՀՀ-ում դատարանները առաջնորդվում են ներպետական օրենսդրության պահանջներով, և ուղղակիորեն հղում չեն կատարում ՄԻԵԴ դիրքորոշումներին, որը հանդիսանում է ՀՀ իրավական համակարգի մասը, հատկապես եթե առկա է հակասություններ ՄԻԵԴ-ի դիրքորոշումների և ներպետական օրենսդրության կարգավորումների միջև: (օր՝ Գրիգոր Գևորգյանի, Արման Սահակյանի, Հովհաննես Մկրտչյանի ընդդեմ Իրավունք Մեդիա ՍՊԸ խմբագրական խորհրդի նախագահ՝ Հայկ Բաբուխանյանի, Հովհաննես Գալաջյանի թիվ ԵԿԴ/2146/02/14 գործով դատարանը մերժեց կիրառել ՄԻԵԴ կողմից ընդունված խտրականության գործերով ապացուցման կանոնները, փոխարենը կիրառեց ներպետական քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կանոնները, ինչը անհնարին դարձրեց գործով խտրականության դեպքի ապացուցումը): Այսպիսով, Դատական ատյանները, հատկապես առաջին և երկրորդ ատյանի դատարանները նախաձեռնողականություն չեն դրսևորում ՄԻԵԴ-ի դիրքորոշումների կիրառման հարցում:
ՀՀ դեմ կայացված վճռի կատարման տեսանկյունից կարևոր են տվյալ գործով արձանագրված շարունակական խախտման դադարեցումը, մինչ խախտումը առկա վիճակի վերականգնումը, գործի վերաբացման ներպետական դատավարական մեխանիզմները: ՀՀ

դատական օրենսգրքով սահմանվում է նոր հանգամանքներով դատական գործի վերանայման վարույթները:

Աղյուսակ 6. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՄԻԵԴ վճիռների վկայակոչման վերաբերյալ												
	2015				2014				2013			
	Ընդհանուր	ՄԻԵԴ վճիռ	ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռ	Ընդհանուր/ ՄԻԵԴ վճիռ	Ընդհանուր	ՄԻԵԴ վճիռ	ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռ	Ընդհանուր/ ՄԻԵԴ վճիռ	Ընդհանուր	ՄԻԵԴ վճիռ	ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռ	Ընդհանուր/ ՄԻԵԴ վճիռ
Քրեական գործեր	45	8	2	47%	57	17	3	30%	52	14	2	27%
Քաղաքացիական գործեր	78	41	4	51%	83	35	0	42%	84	49	0	58%
Վարչական գործեր	25	18	0	72%	20	15	0	75%	29	17	0	59%

Այսպիսով, չնայած ՀՀ դատական իշխանությունը ՀՀ Սահմանադրությամբ (հոդված) հռչակված է որպես անկախ և իշխանության ինքնություն ճյուղ, ինչպես ցույց է տալիս ՄԻԵԴ Վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ այն բավականաչափ զուսպ է ՄԻԵԴ դիրքորոշումների կիրարկման հարցում, որը պայմանավորված է գործադիր մարմնից դատական իշխանության կախվածությամբ[40]:

[40] Տե՛ս «Ամփոփ տեղեկատվություն ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում ՄԻԵԴ վճիռներ վկայակոչելու վերաբերյալ» Տեղեկանք hcav.am/publications/21-03-2016-05/

2007 - 2015 թթ. ՀՀ դեմ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման վիճակը

Անհատական բնույթի միջոցառումների իրականացման վիճակը

Ինչպես նշվել է վերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների կատարումը ենթադրում է առաջին հերթին անհատական բնույթի միջոցառումների իրականացում, որոնց ուղղված են տվյալ գործով տուժողի իրավունքների վերականգնմանը: Անհատական բնույթի միջոցառումների իրականացման արդյունքում

- պետք է դադարի տուժողի իրավունքների խախտումը՝ այն դեպքում, երբ այն շարունակական է,
- կվերականգնվի մինչ խախտումը առկա իրավիճակը (restitution in integrum), և
- տուժողը կստանա արդարացի փոխհատուցում խախտված իրավունքի դիմաց:

Շարունակական խախտման դադարեցում

Շարունակական խախտման դադարեցման պահանջը բխում է մարդու իրավունքները հարգելու հիմնարար պահանջից և ՄԻԵԿ 46-րդ հոդվածից, ըստ որի դատարանի վճիռները ունեն պարտադիր ուժ և ենթակա են պարտադիր կատարման Անդամ-պետությունների կողմից: Շարունակական խախտման դադարեցման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները պետք է իրականացվեն անմիջապես, դատարանի կողմից վճռի կայացման պահից և որոշ դեպքերում նույնիսկ մինչ դատարանի կողմից վճռի կայացումը, Դատարանի կանոնների[41] 39-րդ կետի համաձայն միջանկյալ միջոցների կիրառման դեպքում:

ՀՀ դեմ գործերով կայացված Եվրոպական դատարանի վճիռներից ուշագրավ է շարունակական խախտման դադարեցման հիմնախնդիրը Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի[42] գործով: Այս գործով թեև Դատարանի կողմից 2012 թ. հուլիսին կայացվել էր 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում «ողջամիտ ժամկետի չպահպանման» հիմքով, այնուամենայնիվ Դիմումատուի դեմ հարուցված քննությունը դադարեցվել է միայն 2013 թ. սեպտեմբերի 6-ին (DD(2013)1235): Ավելին, այս խնդրի մասին Դիմումատուն նաև հայտնել է ԵԽ Նախարարներ կոմիտեին անհատական միջոցառումների իրականացման վերաբերյալ թիվ DD(2013)695

[41] http://www.echr.coe.int/Documents/Rules_Court_ENG.pdf
[42] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-112103

տեղեկատվությամբ: Այսպիսով, այս գործով Եվրոպական դատարանի վճռով ճանաչված խախտումը շարունակվել է վճիռը կայացնելուց հետո դեռևս առավել քան 1 տարի:

Շարունակական խախտման դադարեցման հիմնախնդիրը ՀՀ կողմից չկատարված վճիռներով առավել մտահոգիչ է Չիրագովն ընդդեմ Հայաստանի գործով, որով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածի խախտումները պայմանավորված է ընթացող տարածաշրջանային կոնֆլիկտով:

Մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնում

Մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման պահանջը (restitution in integrum) բխում է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասից:
Այս միջոցի նպատակն է ապահովել, որպեսզի Դիմումատուն հայտնվի այն իրավիճակում, որում կհայտնվեր այն դեպքում, եթե խախտումը տեղի չունենար[43]:
Սակայն իրավունքի և իրավունքի խախտման բնույթից ելնելով այս միջոցը ոչ բոլոր վճիռներով է հնարավոր իրագործել: Նման դեպքերում այս միջոցի իրագործումը փոխարինվում է արդարացի փոխհատուցում վճարելու միջոցով, որի դեպքում գումարի չափը տեսականորեն պետք է համապատասխանի մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման հիպոթետիկ արժեքին: Այսպես, Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի և Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործերով Դատարանն արձանագրելով, որ նախկին վիճակի վերականգնումը հնարավոր չէ, հաշվի առնելով, որ բնակարանը քանդված է, որոշեց որ Դիմումատին պետք է փոխհատուցվի հասցված նյութական վնասը:
Մինչ խախտումը առկա վիճակի վերականգման հիմնական միջոց է հանդիսանում գործի վերաքննությունը և վերաբացումը:
Գործի վերաքննության և վերաբացման ընթացակարգերը ՄԻԵԴ վճիռների կատարման առավել բարդ, վիճելի և ձևավորման ընթացքում գտնվող ընթացակարգերից է: Դա պայմանավորված է թե՝ այն հանգամանքով, որ սովորաբար իրավունքի խախտման փաստից մինչ վերաբացման իրավունքի առաջացումը չափազանց երկար ժամանակ է անցնում, թե՝ գործի վերաբացմամբ և վերանայմամբ երրորդ անձանց իրավունքի միջամտությամբ և այլն[44]:

[43] https://www.icl-journal.com/download/f1527ce403500a9ec58b8269a9a91471/ICL_Thesis_Vol_7_3_13.pdf
[44] The execution of judgments of the european court of human rights, Elisabeth Lambert-Abdelgawad, էջ 15

Այս հանգամանքով է պայմանավորված նաև այն փաստը, որ ԵԽ նախարարների կոմիտեի կողմից «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին» թիվ R(2000)2 հանձնարարականի ընդունումը, որով վերահաստատվել է որոշ դեպքերում մինչ իրավունքի խախտումը առկա վիճակի վերականգնման միակ միջոցը գործերի վերաքննության և վերաբացման հնարավորության ընձեռումը:
Այնուամենայնիվ, Բոչանն ընդդեմ Ուկրաինայի[45] գործով «Դատարանը վերլուծելով քաղաքացիական գործերով վերաբացման հիմնախնդիրը նշեց, որ հարցված երեսունութ անդամ պետություններից տասնվեցում ներպետական իրավական դրույթները ներկայումս հստակորեն չեն նախատեսում Դատարանի կողմից Կոնվենցիայի խախտման հիմքով քաղաքացիական գործերի վերանայման մեխանիզմ (դա վերաբերում է Ավստրիային, Բելգիային, Ֆրանսիային, Հունաստանին, Հունգարիային, Իտալիային, Իռլանդիային, Լիխտենշտեյնին, Լյուքսեմբուրգին, Մոնակոյին, Նիդերլանդներին, Լեհաստանին, Սլովենիային, Իսպանիային, Շվեդիային և Միացյալ Թագավորությանը (Անգլիային և Ուելսին)):» Միևնույն ժամանակ դատարանը արձանագրեց, որ սակայն այդ պետություններից մի քանիսում Դիմումատուները կարող են նման իրավիճակներում փորձել վերաբացել գործը՝ նոր երևան եկած հանգամանքների կամ թույլ տրված դատավարական սխալի հիմքերով (օրինակ՝ Ֆրանսիայում, Նիդերլանդներում և Լեհաստանում):

ՀՀ-ում, գործերի վերաքննության և վերաբացման ընթացակարգերը կարգավորվում է քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերով (ՀՀ քաղաքացիական դատավարության օր-ի 3-րդ բաժին, ՀՀ քրեական դատավարության օր-ի 12-րդ բաժին, ՀՀ վարչական դատավարության օր-ի 4-րդ բաժին): ՄԻԵԴ վճռի դեպքում գործի վերաբացումը հնարավոր է նոր հանգամանքների հետևանքով:

Միևնույն ժամանակ հայ մասնագետների կողմից բարձրացվել է նաև գործի վերանայման դիմում ներկայացնելու դատախազի «պարտավորության», այլ ոչ «իրավունքի» սահմանման հիմնախնդիրը, տե՛ս Աշուղյանն ընդդեմ Հայաստանի գործով «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի կողմից 2013 թ. հոկտեմբերի 8-ին ներկայացված թիվ DD(2013)1116[46] Տեղեկատվությունը:

[45] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-152331, կետեր:
[46] https://wcd.coe.int/wcd/ViewDoc.jsp?Ref=DH-DD(2013)1116&Language=lanEnglish&Site=CM

Արդարացի փոխհատուցման վճարում

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Արդարացի փոխհատուցման վճարումը, Դատարանի վճռի կատարման առավել պարզ միջոցն է: Միևնույն ժամանակ, մի շարք դեպքերում Եվրոպական դատարանը որպես արդարացի փոխհատուցում է ճանաչում խախտման ճանաչումը: Թեև Դատարանի և ԵԽ ՆԿ գործունեության պատմության ընթացքում արձանագրվել են խնդիրներ կապված սահմանված ժամկետից ուշ գումարի վճարման հետևանքով արժույթի արժեզրկման, գումարի արժույթի և այլնի հետ կապված: Նախարարների կոմիտեն արդարացի փոխհատուցման վճարման դեպքում կիրառվող միջոցների վերաբերյալ իր մոտեցումները արտահայտել է «Արդարացի փոխհատուցման շրջանակներում հատկացված գումարների վճարման մշտադիտարկում՝ Նախարարների կոմիտեի առկա փորձը» թիվ CM/Inf/DH(2008)7[47] տեղեկատվական փաստաթղթում: Թեև, ինչպես նշվում է փաստաթղթում արդարացի փոխհատուցման վճարման վերաբերյալ տեղեկատվությունը բազմաթիվ գործերում ներառվում է հենց վճռի մեջ, այնուամենայնիվ վճռի տեղեկատվությունը բավարար չէ արդարացի փոխհատուցման գործընթացի կարգավորման հետ կապված որոշ հարցերի լուծման կարգավորման համար: Ուստի այս փաստաթուղթը մանրամասն անդրադառնում է արդարացի փոխհատուցում ստացող անձանց շրջանակին, վայրին, փոխարժեքին, Դատարանի կողմից սահմանված ժամկետից ուշ վճարման և այլ հարցերին:
ՀՀ կողմից արդարացի փոխհատուցման գումարների վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով, ՀՀ կառավարության որոշման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու միջոցով:

[47] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680592209

ՀՀ դեմ կայացված վճիռներով 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արդարացի փոխհատուցման կարգով ՀՀ կառավարության կողմից վճարվել է 245.720 ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Այս գումարի մեջ ներառված չէ Բարեկամական կարգավորումների հիման վրա փոխհատուցված գումարները: (Տե՛ս Աղյուսակ 7)

Աղյուսակ 7. Արդարացի փոխհատուցումների վճարման վիճակի վերաբերյալ					
Տարեթիվ	Արդարացի փոխհատուցման բավարարված պահանջի չափը	Փոխհատուցված գումարների չափը և համապատասխան Կառավարության որոշումը		Վճռի ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Գործի անվանումը
2007	4000	4000	11 հոկտեմբերի 2007 թ. N 1162Ա	28/09/2007	«Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» N 36549/03
Ընդամենը		4000			
2008	3000	3000	17 ապրիլի 2008 թվականի N 363Ա	15/02/2008	Գալստյանն ընդդեմ Հայաստանի» N 26986/03
	1225	1225	4 սեպտեմբերի 2008 թվականի N 1000Ա	02/06/2008	«Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» N 21638/03
	30000	30000	6 նոյեմբերի 2008 թվականի N 1276Ա	17/09/2008	«Մելտեքս ՍՊԸ և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի» N 32283/04
	4000	4000	20 նոյեմբերի 2008 թվականի N 1341Ա	27/08/2008	«Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի» N 38978/03
Ընդամենը		38225			
2009	3000	31500	9 հուլիսի 2009 թվականի N 748Ա	13/01/2009	«Սափեյանն ընդդեմ Հայաստանի» N 35738/03,
	3000			13/04/2009	«Ամիրյանն ընդդեմ Հայաստանի» N 31553/03
	3000			13/04/2009	«Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (N1)» N 35944/03
	7500			04/05/2009	«Միսիթարյանն ընդդեմ

					Հայաստանի» N 22390/05,
	7500			04/05/2009	«Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» N 31237/03
	7500			04/05/2009	«Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» N 41698/04
	5000	5000	3 դեկտեմբերի 2009 թվականի N 1398Ա	16/09/2009	«Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (N 2)»
Ընդամենը		36500			
2010	2200	2200	11 մարտի 2010 թվականի N 229Ա	27/01/2010	«Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի» N 45081/04
	1745	1745	11 մարտի 2010 թվականի N 232Ա	01/03/2010	«Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի» N 31761/04
	7500	7500	11 մարտի 2010 թվականի N 233Ա	27/01/2010	«Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» N 22387/05
	2500	2500	5 օգոստոսի 2010 թվականի N 960Ա	09/05/2010	«Ասատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 24173/06
	16000	16000	2 դեկտեմբերի 2010 թվականի N 1568Ա	15/09/2010	Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի N 34334/04
	1000	1000	2 դեկտեմբերի 2010 թվականի N 1604Ա	04/10/2010	«Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» N 25083/05
Ընդամենը		30945			
2011	20000	20000	4 օգոստոսի 2011 թվականի N 1081Ա	07/07/2011	«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 23459/03
Ընդամենը		20000			
2012	10000	30000	7 հունիսի 2012 թվականի N 721Ա	20/03/2012	«Պողոսյանն ընդդեմ Հայաստանի» N 44068/07
	10000			10/04/2012	«Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի» N 37819/03
	10000			10/04/2012	«Ծատուրյանն ընդդեմ

					Հայաստանի» N 37821/03
	4100	32100	13 սեպտեմբերի 2012 թվականի N 1159Ա	0/07/2012	«Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի» N 8088/05
	28000			10/07/2012	«Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 34320/04
	6227	49288	1 նոյեմբերի 2012 թվականի N 1379Ա	05/09/2012	«Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի» N 12895/06
	30500			12/09/2012	«Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի» N 22999/06
	4543			26/09/2012	«Մալխասյանն ընդդեմ Հայաստանի» N 6729/07
	8018			26/09/2012	«Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի» N 33376/07
	5000	5000	24 հունվարի 2013 թվականի N 48 Ա	31/10/2012	«Շոլոխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի Հանրապետության» N 40358/05
	2500	2500	28 փետրվարի 2013 թվականի N 173Ա	17/12/2012	«Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի» N 3627/06
	18545	18545	5 ապրիլի 2012 թվականի N 439Ա	20/10/2010	«Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի» N 5065/06
	120,000, նվազեցված AMD 10,327,606	120,000 նվազեցված AMD 10,327,606			«Երանոսյանն ընդդեմ Հայաստանի» N 3309/06
	45,000	45,000			«Պողոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 3310/06
	29,520,000 ,	29,520,000			«Եղիգարյանն ընդդեմ

	նվազեցված USD 12,870	նվազեցված USD 12,870			Հայաստանի» N 10446/05
	EUR 75,000 նվազեցված USD 32,371.52 և AMD 8,000,000 չափով	75,000 եվրոյին համարժեք դրամ չափով՝ նվազեցված 32,371.52 ԱՄՆի դոլարին համարժեք դրամով և 8,000,000	27 դեկտեմբերի 2012 թվականի N 1645Ա		«Վահանյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 220/06, 32289/06
Ընդամենը		137433[48]			
2013	3000	42555-2500	28 փետրվարի 2013 թվականի N 173Ա	11/02/2013	«Անտոնյանն ընդդեմ Հայաստանի» N 3946/05
	6055			02/01/2013	«Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի» N 22491/08
	31000			11/02/2013	«Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի» N 40094/05
	112000	112000	8 մայիսի 2013 թվականի N 480Ա	27/02/2013	«Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 23978/06
	3600	3600	10 հուլիսի 2013 թվականի N 728Ա	19/05/2013	«Մելիքյանն ընդդեմ Հայաստանի» N 9737/06
	95506				«Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» 25825/05
	36030				«Թունյանն ընդդեմ Հայաստանի» N 22812/05
Ընդամենը		155655[49]			
2014	6030	6030	28 օգոստոսի 2014 թվականի N 903Ա	08/07/2014	«Մինասյանն ընդդեմ Հայաստանի» N 44837/08
Ընդամենը		6030			

[48] Այս թվի մեջ ներառված չեն Բարեկամական կարգավորման հիման վրա վճարված գումարները՝ «Երանոսյանն ընդդեմ Հայաստանի» N 3309/06, «Պողոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 3310/06, «Եդիգարյանն ընդդեմ Հայաստանի» N 10446/05, «Վահանյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 220/06, 32289/06 գործերով:

[49] Այս թվի մեջ չի ներառվել Թունյանն ընդդեմ Հայաստանի գործով փախհատուցված գումարը, քանի որ այն չի փոխանցվել ՀՀ կառավարության կողմից: (Տե՛ս թիվ DD(2015)383Գործողությունների զեկույցը)

2015	52000	160000	14 մայիսի 2015 թվականի N 490Ա	13/02/2015	«Ղարիբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 19940/05
	44000			13/02/2015	«Բաղդասարյանը և Զարիկյանցն ընդդեմ Հայաստանի» N 43242/05
	64000			13/02/2015	«Ղասաբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» N 23566/05
	62100	71160	10 սեպտեմբերի 2015 թվականի N 1041Ա	30/06/2015	«Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի» (N 9935/06 և 23339/06
	9060			30/06/2015	«Դավթյանն ընդդեմ Հայաստանի» (N 29736/06 գանգատ
	3660	3660	10 դեկտեմբերի 2015 թվականի N 1440Ա	07/10/2015	«Շամոյանն ընդդեմ Հայաստանի» գործով (N 18499/08
	4900				Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի
	3000				Սահակյանն ընդդեմ Հայաստանի
	3000				Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի
Ընդամենը		234820			

Ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացման վիճակը

ՄԻԵԴ վճռից բխող ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացման նպատակն է կանխել ապագայում նմանատիպ խախտումները, ՄԻԵԿ պահանջների լիարժեք կիրարկումը և նպաստել է ՄԻԵԴ պաշտպանության սուբսիդիարության սկզբունքի ապահովմանը: Ընդհանուր բնույթի միջոցառումների կատարումը բխում է թե՛ ՄԻԵԿ 1-ին հոդվածից, թե 46-րդ հոդվածով սահմանված ՄԻԵԴ վճիռների պարտադիր կատարման պահանջից:

Ընդհանուր բնույթի միջոցառումների իրականացման պահանջը կատարելու նպատակով Պետությունը պետք է առաջին հերթին ուսումնասիրի խախտման բուն պատճառը, թե արդյոք խախտումը տեղի է ունեցել օրենսդրական բացերի, թե օրենսդրության ոչ իրավաչափ կիրառման հետևանքով: Միևնույն ժամանակ, անկախ այն հանգամանքից, թե ինչն է հանդիսացել խախտման պատճառ, վճռի կայացման պահից ի վեր պետությունը չի կարող դրսևորել նմանատիպ վարքագիծ: Այսպես, Մարքսն ընդդեմ Բելգիայի[50] գործով Դատարանը նշել է, որ պետություններն այլևս չեն կարող կիրառել այն դրույթը, որը խախտում է Կոնվենցիան և պետք է ձեռնարկեն միջանկյալ միջոցներ մինչ օրենսդրության կհամապատասխանեցումը:

Որպես կանոն Դատարանը իր վճռի մեջ ուղղակիորեն նշում է խախտման պատճառները՝ համապատասխան օրենսդրական բացը կամ օրենսդրության կիրառման թերությունը: Այնուամենայնիվ, հաճախ խախտման պատճառ հանդիսացած օրենսդրական բացի փոփոխության արդյունքում չի փոփոխվում իրավակիրառ պրակտիկան և խախտումները շարունակում են տեղի ունենալ օրենսդրական այլ կարգավորումների շրջանակներում: Սակայն ելնելով Դատարանի կողմից վկայակոչվող սկզբունքից, ըստ որի իրավունքը չպետք է ունենա պատրանքային բնույթ[51] և պետք է իրական լինի, կարելի է նշել, որ ՄԻԵԴ վճիռների կատարումը ևս չպետք է կրի պատրանքային բնույթ և իրավունքի խախտումը անհրաժեշտ է վերացնել բոլոր մակարդակներում՝ թե օրենսդրական, թե իրավակիրառ:

Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռների կատարման փորձը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում Կառավարության կողմից վկայակոչված միջոցները, որոնք պետք է նպաստեն խախտման և խախտման բուն պատճառների վերացմանը չեն հանգեցրել իրենց նպատակին (Տե՛ս Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի[52] (ՄԻԵԿ 11-րդ հոդված) վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը): Որոշ գործերով վճռի կատարման հանդեպ վերահսկողության գործընթացը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից գնահատվել է փակված, չնայած նմանատիպ խախտումները համակարգային մակարդակում դեռևս չեն վերացել (Տես Մինասյանը և Սեմերջյանը ընդդեմ Հայաստանի[53] (թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված) գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը):

Ուսումնասիրված 55 վճիռներից փակվել են 38ը, որոնցից 6-րդ հոդվածով՝ 11 վճիռ, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով՝ 9 վճիռ, թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածով՝ 8 վճիռ: Նշված 55-ից վճիռներով արձանագրվել են թվով 93 խախտում, որոնցից առավելագույնը. 6-րդ հոդվածով՝ 24 խախտում, 5-րդ հոդվածով՝ 21 խախտում, թիվ 1 Արձանագրության 1-ին

[50] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57534
[51] Տե՛ս Artico v. Iraly, 6694/74
http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57424
[52] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-110263
[53] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-93184

հոդվածով՝ 12 խախտում, 3-րդ հոդվածով՝ 9 խախտում: Նշված խախտումից բավարար միջոցառումներ են իրականացվել 36-ի ուղղությամբ: (Տե՛ս Գծապատկեր 1, 2, 3)

Նշվածի հետ մեկտեղ որոշ դեպքերում խախտման պատճառ հանդիսացած պրակտիկան և օրենսդրությունը փոփոխվել է նույնիսկ մինչ ՄԻԵԴ կողմից վճռի ընդունումը:

Սույն գլխում ներկայացվում են առանձին գործերով վճռի կատարման ընթացքի և վիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ խախտված հոդվածների:



Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Գծապատկեր 3

ՄԻԵԿ 2-րդ հոդված՝ Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

ՀՀ դեմ 2007-2015 թթ-ին կայացված վճիռներով կյանքի իրավունքի խախտման դեպքեր ՄԻԵԿ կողմից չի արձանագրվել:

ՄԻԵԿ 3-րդ հոդված՝ Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել թվով 9 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 10%: Այդ գործերն են.

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի 41698/04
Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի 31237/03
Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի 22390/05
Կարապետյանն ընդդեմ Հայաստանի 22387/05
Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի 34334/04[54]
Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի 33376/07
Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի 40094/05
Դավթյանն ընդդեմ Հայաստանի 29736/06
Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի 9935/06; 23339/06

Նշված գործերում Դատարանի կողմից արձանագրվել են դատարաններում ամբաստանյալներին մետաղյա ճաղավանդակներում պահման, քրեակատարողական հիմնարկներում ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրումը, Ձերբակալվածների պահման վայրերում և քրեակատարողական հիմնարկներում արժանապատվությունը նվաստացնող պահման պայմանները, ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգման կիրառումը և իշխանությունների կողմից խոշտանգման դեպքի վերաբերյալ անարդյունավետ և ոչ պատշաճ քննության իրականացումը:
Նշված խնդիրներից վերջնական և լիարժեք լուծում է ստացել միայն դատարաններում ճաղավանդակներում ամբաստանյալների տեղավորման և մասամբ քրեակատարողական

[54] Գործի ավանմանը սեղմելով՝ կանցնեք տվյալ զեկույցում նշված գործի կատարման վերաբերյալ մեկնաբանություններին:
Գործի համարին սեղմելով կանցնեք տվյալ գործով կայացված ՄԻԵԴ վճռին:

հիմնարկներում և ձերբակալվածների պահման վայրերում անձանց պահման պայմանների հետ կապված հիմնախնդիրները:



Գծապատկեր 4

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (41698/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուի կալանքի ընթացքում պահման պայմանները (ինը այլ անձանց հետ միասին 10 քմ մակերեսով խցում պահվելը, մահճակալների կամ անկողնային պարագաների բացակայությունը, ինչի արդյունքում կալանավորները ստիպված են եղել քնել հատակին, զուգարանից և խմելու ջրից անարգել օգտվել թույլ չտալը) հանգեցրել են անձի նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 գործողությունների ծրագրեր և զեկույց՝ 2010 թ. ապրիլի 9-ին Action report, 2014 թ.նոյեմբերի 18-ին թիվ DD(2014)1420 2015 թ. հուլիսի 3-ին թիվ DD(2015)738: Իսկ 2015 թ. նոյեմբերի 4-ի թիվ CM/ResDH(2015)169 եզրափակիչ բանաձևով գործով վճռի կատարման վարույթը փակվել է:

Գործողությունների ծրագրերով ՀՀ կառավարությունը հայտնել է 2004 թ. դեկտեմբերի 28-ի թիվ ՀՀ նախագահի թիվ ՆԿ-328-ՆԳ կարգադրության[55] հիման վրա իրականացված բարեփոխումների, ազգային կանխարգելման մեխանիզմի և դրա գործունեության ընթացքում հասարակական կազմակերպությունների ներգրավման, դիտորդական խմբերի գործունեության վերաբերյալ:
Թեև վճռի կատարման վարույթը փակվել է, և ընդհանուր առմամբ համակարգային խնդիրները կարելի է համարել լուծված, այնուամենայնիվ դեռևս առկա են ՃՊՎ-ներում և Քրեակատարողական հիմնարկներում պահման ոչ բարենպաստ պայմանների վերաբերյալ մտահոգություններ (լրացուցիչ տե՛ս ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2014 թվականի գործունեության մասին հաշվետվությունը):

Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (31237/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)

[55] Կարգադրությունը ՀՀ իրավական տեղեկատվական համակարգու հնարավոր չեղավ գտնել:

Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (22390/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Կարապետյանն ընդդեմ Հայաստանի (22387/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/01/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420)

Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (34334/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15/09/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)435)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուին չի տրամադրվել ընթացիկ բժշկական օգնությամբ և չի սահմանվել պատշաճ հսկողությամբ, իսկ նրա բողոքները այս հարցերի վերաբերյալ մնացել են անպատասխան կամ ստացել են ձևական պատասխաններ, ինչի արդյունքում Դիմումատուն տառապել է այնպիսի բժշկական պայմաններում պահվելուց, որոնք սահմանազանցել էին ազատազրկմանը բնորոշ անխուսափելի զրկանքների շեմը: Բացի այդ տեղի է ունեցել արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, քանզի ամբողջ դատաքննության ընթացքում Դիմումատուն պահվել է ամբաստանյալների համար նախատեսված ճաղերով փակված վայրում, որը նման էր մետաղյա ճաղավանդակի և վերահսկվել է հատուկ ծառայությունների կողմից, որի աշխատակիցները կրել են սև դիմակներ, այն պարագայում, երբ առկա չի եղել Դիմումատուի փախուստի կամ բռնության դիմելու վտանգը:

Սույն գործով ՀՀ կառավարությունը 2015 թ.ապրիլի 16-ին ներկայացրել է թիվ DD(2015)435 Գործողությունների ծրագիրը, որով հայտնել է իրականացված թե՛ օրենսդրական բարեփոխումների, թե՛ գործնական քայլերի վերաբերյալ: Մասնավորապես ՀՀ կառավարությունը հայտնել է «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի մեկնարկի, քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի միջև համագործակցության հուշագրի կնքման, «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և շահագործման հանձնման վերաբերյալ: Օրենսդրական բարեփոխումների շրջանակներում Կառավարությունը անդրադարձել է 2006 թ. Մայիսի 26-ի ՀՀ կառավարության թիվ 825-Ն որոշմանը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսվող կարգավորումներին, որոնց համաձայն ձերբակալված անձը իրավունք ունի իր պահանջով ենթարկվել բժշկական զննության (ՀՀ քրեական դատավարության օր-ի նախագծի 110-րդ հոդված), իսկ դատարանը մերժում է խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը այն դեպքում, երբ ձերբակալվածի մարմնի վրա ակնհայտ վնասվածքների առկայության պարագայում նրան չի տրամադրվել անհրաժեշտ բժշկական օգնություն կամ դատարանին չի ներկայացվել այդ վնասվածքների առաջացման ողջամիտ բացատրություն (295-րդ հոդված):

Ինչ վերաբերում է դատարանի դահլիճներում մետաղյա ճաղավանդակների կիրառմանը, ՀՀ կառավարությունը վստահեցրել է, որ բարեփոխումների արդյունքում դատարաններում մետաղյա ճաղավանդակներ այլևս չեն կիրառում[56]:

Չնայած վերոնշյալ տեղեկատվության անհրաժեշտ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների բժշկական ծառայությունների որակը դեռևս մնում է անբավարար[57]: ՀՀ կառավարության կողմից տրամադրված տեղեկատվությունից ևս պարզ է որ, խնդիրը դեռևս լուծված չէ, չնայած կառավարությունը հայտնում է դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին:

---

[56] Անհրաժեշտ է նշել, որ այժմ Ավետիսյանների ընտանիքի սպանության գործով վարվող արտագնա դատական նիստերի ընթացքում մեղադրյալ Վ. Պերմյակը պահվում է ապակեպատ խցում:

[57] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի 2013 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանըhttp://pmg.am/images/PMG_report_2013.pdf

Ուստի թեև մետաղյա ճաղավանդակների կիրառման վերաբերյալ խնդիրը լուծված է, սակայն քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների տրամադրման հիմնախնդիրը դեռևս օրակարգային է:

Փիրուզյան ընդդեմ Հայաստանի (33376/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)435) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը (դատական նիստերի ընթացքում ամբաստանյալին մետաղյա ճաղավանդակներում պահելու վերաբերյալ):

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (40094/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.02.2015(DD(2015)206) 25.02.2014(DD(2014)328)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տառապանք, այն դեպքում, երբ ներպետական մարմիններ և Կառավարությունը Դիմումատուի վնասվածքների ծագման վերաբերյալ իրենց բացատրությունները հիմնավորել են բացառապես ոստիկանների, ներառյալ ենթադրյալ հանցանք կատարած անձանց ցուցմունքներով: Միևնույն ժամանակ, Դատարանն արձանագրել է, որ վատ վերաբերմունքի մասին Դիմումատուի պնդումների առումով իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված հետաքննությունը եղել է անարդյունավետ, ոչ պատշաճ և միանգամայն թերի, իրավասու մարմինները բավականաչափ բարեխիղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պատժելու հանցագործներին:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր 2015 թ. փետրվարի 16-ին թիվ DD(2015)206 և 2014 թ. փետրվարի 25-ին թիվ DD(2014)328: Նշված Գործողությունների ծրագրերով ՀՀ կառավարությունը ներկայացրել է տեղեկատվություն ՀՀ քրեական օրենսգրքում թիվ ՀՕ-69-Ն Օրենքով կատարված օրենսդրական փոփոխության վերաբերյալ, որով խոշտանգում հանցակազմը սահմանվել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի դրույթներին համապատասխան (309.1 հոդված), իսկ դատավարական երաշխիքների շրջանակներում ՀՀ կառավարությունը հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 110-րդ հոդվածին, որով սահմանված է ձերբակալված անձի նվազագույն իրավունքները:
Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարությունը ներկայացրել է բավականին ոչ լիարժեք և ոչ հիմնավոր տեղեկատվություն ՀՀ-ում խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ ձեռնարկված և նախատեսվող քայլերի վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից չեն ներկայացվել վիճակագրական տվյալներ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից խոշտանգումների վերաբերյալ հանցագործությունների քննության մասին: Կարելի է արձանագրել, որ խոշտանգումների կիրառման վերաբերյալ բողոքները դեռևս չեն արժանանում լիարժեք և արդյունավետ քննության, միևնույն ժամանակ դեռևս շարունակվում է միայն ենթադրյալ խոշտանգում կիրառած իրավապահ մարմինների ծառայողների վկայությունների հիման վրա քննչական մարմինների և դատարանների կողմից եզրահանգումների կատարումը: Բացակայում են այն օրենսդրական կարգավորումները (բացառությամբ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների վերաբերյալ), որոնց համաձայն պետք է դադարեցվեն իրավապահ մարմինների այն ծառայողների լիազորությունների իրականացումը, որոնց հանդեպ

հարուցվել է քրեական հետապնդում: Նաև դեռևս մտահոգիչ է քրեական գործով նախաքննության և դատաքննության ընթացքում անձի կողմից իր հանդեպ խոշտանգումների կիրառման վերաբերյալ հայտարարություններին ընթացք տալու և պատշաճ քննություն իրականացնելու հետ կապված պրակտիկան:
Այսպիսով, տվյալ մասով վճիռը չի կարելի գնահատել կատարված:

Դավթյանն ընդդեմ Հայաստանի (29736/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուն երկար ժամանակ չի ապահովվել բժշկական հետազոտություններով և բուժմամբ, ուստի նրան կալանքի տակ պահելու պայմաններն անցել են կալանավորվածներին տառապանք պատճառելու անխուսափելի սահմանը և համարժեք են եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի: Ընդ որում, Դատարանը արձանագրել է, որ միայն այն հանգամանքը, որ անձը բժշկական օգնության կարիք է ունեցել կամ պահանջել է բժշկական օգնություն, սակայն այն հասանելի չի եղել նրան, արդեն իսկ կարող է բավարար լինել եզրակացնել, որ նման վերաբերմունքը եղել է նվաստացնող: Անհրաժեշտ բժշկական օգնություն չտրամադրելու պատճառով այնպիսի առողջական վիճակի հասցնելը կամ այլ կերպ լուրջ կամ երկար ցավեր պատճառելը պարտադիր հանգամանք չէ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք արձանագրելու համար :
Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագիր դեռևս չի ներկայացվել:
Լրացուցիչ տեղեկատվություն տե՛ս Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի

կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի (9935/06; 23339/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռով Դատարանն արձանագրել է, որ տեղի է ունեցել վատ վերաբերմունք մոր և աղջկա (երկրորդ և երրորդ Դիմումատուների նկատմամբ), որը կարելի է որակել որպես խոշտանգում, հաշվի առնելով նրանց վնասվածքները, խոստովանական ցուցմունքներ կորզելու համար նման վերաբերմունք ցուցաբերելու ոստիկանների ակնհայտ մտադրությունը, այն փաստը, որ նրանք մայր և աղջիկ էին, հետևաբար երկուսն էլ հավանաբար ուժգին տառապել են մեկը մյուսի կրած ցավից, և հաշվի առնելով, որ երրորդ Դիմումատուն անչափահաս էր: Բացի այդ Դատարանն արձանագրել է, որ իշխանություններին չի հաջողվել պատշաճ կերպով ձեռք բերել և գնահատել կարևոր նշանակություն ունեցող բժշկական և այլ բնույթի ապացույցները, իսկ Դիմումատուի կողմից բողոքարկելու բոլոր փորձերին տրվել են ձևական պատասխաններ, հետևաբար իշխանությունների կողմից իրականացված քննությունը եղել է անարդյունավետ և ոչ պատշաճ:

Սույն գործով ՀՀ կառավարության կողմից չի ներկայացվել Գործողությունների ծրագիր կամ Գործողությունների զեկույց:

ՄԻԵԿ 4-րդ հոդված՝ Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:
2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:
3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝
ա. ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,
բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,
գ. ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,
դ. սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

Ստրկության և հարկադիր աշխատանքի չենթարկվելու իրավունքի խախտում ՀՀ դեմ կայացված վճիռներով ՄԻԵԿ կողմից 2007-2015 թթ-ին չի արձանագրվել:

ՄԻԵԿ 5-րդ հոդված՝ Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.
ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,
բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,
գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է

համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,
դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,
ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,
զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:
2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:
3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:
4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:
5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման

2015 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 5-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 10 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 23%: Այդ գործերն են.

- Ասատրյանն ընդդեմ Հայաստանի (24173/06)
- Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (44068/07)
- Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (34320/04)[58]

[58] Գործի ավանմանը սեղմելով՝ կանցնեք տվյալ զեկույցում նշված գործի կատարման վերաբերյալ մեկնաբանություններին:

- Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի (12895/06)
- Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (33376/07)
- Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (6729/07)
- Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)
- Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (23978/06)
- Մինասյանն ընդդեմ Հայաստանի (44837/08)
- Սահակյանն ընդդեմ Հայաստանի (66256/11)



Գծապատկեր 5

Դատարանի կողմից ճանաչվել է 5-րդ հոդվածի 1-ին (9 գործ), 3-րդ (5 գործ), 4-րդ (4 գործ) և 5-րդ (2 գործ) կետերի խախտումներ:

Սույն հոդվածի խախտումներ արձանագրված գործերով որպես խախտումներ ճանաչվել են թե՛ օրենսդրական ոչ բավարար կարգավորումները, թե՛ իրավակիրառ պրակտիկայում իրավապահ մարմինների կամ դատարանների կողմից դրսևորված ոչ իրավաչափ գործողությունները: Հատկանշական է, որ գործերում բարձրաձայնված խնդիրների մի մասի շրջանակներում մինչ ՄԻԵԴ վճռի կայացումը, որոշում է կայացրել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որի մեկնաբանությունները ուղղված են եղել տվյալ խախտման վերացմանը:

Միևնույն ժամանակ ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի նախադեպերը չեն նպաստել այնպիսի խնդիրների վերացմանը, ինչպիսիք են. կալանքի կիրառման օրինականության չափանիշի, շարունակական կալանքի «ողջամիտ ժամկետի» պահանջի, կալանավորման և կալանքի ժամկետի երկարաձգման համար «հիմնավոր և բավարար» ապացույցների առկայության,

Գործի համարին սեղմելով կանցնեք տվյալ գործով կայացված ՄԻԵԴ վճռին:

կալանքի միջնորդությունների քննության ընթացքում կողմերի հավասարության ապահովման, ներառյալ քրեական գործերով ողջամիտ ժամկետներում քննության իրականացման, կալանք կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումների փաստական և իրավական լիարժեք հիմնավորվածության ապահովմանը:

Սույն ոլորտում նաև իրականացվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ, մի շարք խնդիրների լուծումը նախատեսվում է ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի նախագծով: Օրենսդրական բարեփոխումների շրջանակներում կարևոր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ոչ նյութական վնասների փոխհատուցման ինստիտուտի սահմանումը, որը իրավունքին առավել համահունչ դարձավ 2015 թ. դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխությունների արդյունքում:



Գծապատկեր 6

Առանձին գործերով կայացված վճիռների կատարման վիճակի ուսումնասիրություն

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (34320/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն անդրադարձել է անձի ազատազրկման օրինականության պայմանին և կամայական ազատազրկման հիմնախնդիրներին: Մասնավորապես դատարանի կողմից արձանագրվել է, որ կալանավորման վերաբերյալ որոշում կայացնելիս Դիմումատուների կալանավորման համար փաստական և իրավական հիմքերը ստուգելու հարցում անփութություն է ցուցաբերել: Դատարանը նաև արձանագրել է, որ Դիմումատուի կալանավորումը հետապնդել է նպատակներ, որոնք որևէ կապ չեն ունեցել ազատությունից զրկելը արդարացնող պաշտոնական հիմնավորումների հետ, և ոստիկանության սպաների կողմից պարզապես անբարեխղճության դրսևորում են եղել:

Սույն գործով վճիռը վերջնական ուժի մեջ է մտել 2012 թ. հուլիսի 10-ին: Ի կատարումն որի ՀՀ կառավարությունը Գործողությունների զեկույց է ներկայացրել միայն 2015 թ. ապրիլին թիվ DD(2015)434 Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի շրջանակներում: Սույն վճռով արձանագրված 5-րդ հոդվածի հետագա խախտումների կանխարգելման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից տեղեկատվություն չի տրամադրվել: Միաժամանակ ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացների իրականացման, համապատասխան ուղեցույցների մշակման և վճռի

թարգմանության վերաբերյալ: Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ տվյալ միջոցառումները արդյունավետ չեն եղել Հայաստանում հավաքների մասնակիցներին կամայական և անօրինական ազատազրկումների ոչ իրավաչափ գործելաոճը վերացնելու տեսակետից[59]: Ուստի այս մասով վճիռը կատարված չի կարելի համարել:

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի (12895/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 04.02.2014 (DD(2014)190) 25.02.2014 (DD(2014)326)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ անձի կալանավորումը առանձին ժամանակահատվածում կրել է անօրինական բնույթ, «պայմանավորված կալանքի ընթացակարգը կարգավորող հստակ նորմերի բացակայությամբ, երբ առաջին ատյանի դատարանը կայացնում էր գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում»:
Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր՝ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի շրջանակներում 2014 թ. փետրվարի 4-ին (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326):
Ներկայացված Գործողությունների ծրագրերում ՀՀ կառավարությունը տեղեկատվություն չի տրամադրել վերոնշյալ խնդրի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թ. հուլիսի 24-ի թիվ ՍԴՈ-710 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության համապատասխան հոդվածը, որով քրեական

[59] Լրացուցիչ տե՛ս ՀՔԱՎ տեղեկատվությունը Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ.
https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=DH-DD(2016)185&Language=lanEnglish&Site=CM

գործը հնարավոր է ուղարկել լրացուցիչ նախաքննության ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Ուստի տվյալ խնդրի արդիականությունը վերացել է: Միևնույն ժամանակ պահպանվել է մեղադրողի կողմից դատաքննության ընթացքում մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու միջնորդությամբ հանդես գալու լիազորությունը, որի դեպքում ըստ գործող կարգավորումների մեղադրյալը իրավասու է դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարանին: Օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:[60] Այսպիսով, այս դեպքում գործը շարունակում է գտնվել դատաքննության փուլում, ուստի նաև կալանքի խնդիրը ևս լուծվում է ըստ համապատասխան նորմերի:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (44068/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20/03/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190) 15.01.2013 (DD(2013)107)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Պողոսյանն ընդդեմ Հայաստան գործով Դատարանն արձանագրել է, որ անձի՝ քրեական գործով նախաքննության ավարտից հետո և մինչ քրեական գործը վարույթ ընդունած դատավորի կողմից դատաքննություն նշանակելու կամ ՀՀ քրեական դատավարության օր-ի 292-րդ հոդվածով նախատեսված այլ որոշման կայացնելը, կալանքի տակ գտնվելը (առավելագույնը 15 օր), այն դեպքում, երբ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ

[60] ՀՀ քրեական դատավարության օր-ի 309[1] հոդված:

դատարանի որոշմամբ սահմանված կալանքի ժամկետը լրացել է, չի համապատասխանում «օրինականության» չափանիշին:
Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 գործողությունների ծրագրեր՝ 2013 թ. հունվարի 15-ին (DD(2013)107), 2014 թ. փետրվարի 4-ին (DD(2014)190), 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326):

Նշված գործողությունների ծրագրերում ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել թիվ ՀՅՔՐԴ 3/0106/01/08 քրեական գործի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թ. ապրիլի 10 որոշման վերաբերյալ, որը կայացվել է մինչ ՄԻԵԴ կողմից Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ վճռի կայացումը: Սույն որոշմամբ վճռաբեկ Դատարանն արձանագրել է, «որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը:»
Միևնույն ժամանակ ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան դրույթների սահմանման վերաբերյալ:
Այս մասով նշված վճիռը կարելի է գնահատել կատարված:

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (6729/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (33376/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)435) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մինասյանն ընդդեմ Հայաստանի (44837/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	08/07/2014
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Չի ներկայացվել[61]
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

[61] Այնուամենայնիվ ներառվել է Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի մեջ, ուստի այս գործ, ուստի այս գործով ներկայացված ծրագրերը վերաբերելի են նաև Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռի կատարմանը:

Տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/01/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 22.04.2014 (DD(2014)96) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի խախտում

Ասատրյանն ընդդեմ Հայաստանի (24173/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	09/05/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Ասատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ կալանքի ժամկետը լրանալուց հետո, անձին ազատ չարձակելու արդյունքում խախտվել է նրա անձեռնմխելիության և ազատության իրավունքը: Դատարանն արձանագրել է, որ կոնկրետ դեպքերում հնարավոր են անձի կալանքից ազատման սահմանափակ ուշացումներ: Սակայն, դա վերաբերում է այն դեպքերին, երբ կալանքի ժամկետը լրացել է դատարանի կարգադրության՝ այլ ոչ թե օրենքով սահմանված պայմանների արդյունքում: Դա կարող է պայմանավորված լինել դատարանների գործունեության գործառնական նպատակահարմարությամբ կամ վարչարարական ընթացակարգերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով և չի կարող գերազանցել մի քանի ժամը:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր 2014 թ. փետրվարի 4-ին (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326) Պողոսյանն ընդդեմ Հայաստանի խումբ գործերի վերաբերյալ ներկայացված ծրագրերի շրջանակներում:

Սույն խախտումը պայմանավորված չէ օրենսդրական բացերով կամ անորոշությամբ, այլ ՀՀ ներպետական օրենսդրության խախտմամբ: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը չի ներկայացրել տեղեկատվություն այն մասին, թե ապագայում նման խախտումների կանխարգելման ուղղությամբ ինչ գործողություններ են ձեռնարկվել, արդյոք նման խախտումներ արձանագրվել են ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, և արդյոք իրավունքը վերականգնվել է ներպետական պաշտպանության միջոցների կիրառման միջոցով:

Միևնույն ժամանակ նշվել է, որ վճռի ուսումնասիրությունը ներառվել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի, Դատախազների դպրոցի, Դատավորների դպրոցի, Հանրային ծառայողների և ՁՊՎ-ների ծառայողների վերապատրաստման ծրագրերում:

Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (23978/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 12.08.2013 (DH-DD(2013)850)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում անձանց կալանավորումը չի ունեցել Կոնվենցիայով նախատեսված սահմանափակ հիմքերից որևէ մեկը:

Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է Գործողությունների զեկույց 2013 թ օգոստոսի 12-ին (DH-DD(2013)850): Խախտումը պայմանավորված չէ օրենսդրական բացերով կամ անորոշությամբ այլ ՀՀ ներպետական օրենսդրության խախտմամբ: Խախտման ուղղությամբ իրականացրած որևէ միջոցառում կամ չափելի արդյունք (վիճակագրական տվյալներ) ներկայացված չէ: Միայն նշված է ՀՀ ոստիկանության ակադեմիայի, Դատախազների դպրոցի, Դատավորների դպրոցի, Հանրային ծառայողների և ՁՊՎ-ների ծառայողների վերապատրաստման ծրագրերում տվյալ վճռի ուսումնասիրության ներառման մասին:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-ին կետի խախտում

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի (12895/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 04.02.2014 (DD(2014)190) 25.02.2014 (DD(2014)326)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուն պահվել է շարունակական կալանքի տակ «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտմամբ: Դիմումատուի կալանքի տակ պահելը պայմանավորած է եղել այն հանգամանքով, որ իշխանությունների վարքագծի հետևանքով տեղի է ունեցել վարույթի էական և անհարկի ձգձգում, իշխանությունները չեն ցուցաբերել անհրաժեշտ ջանասիրություն, ինչի արդյունքում գործի քննությունը ձգձգվել է մեկ ու կես տարով: Սույն գործով դատարանը նաև արձանագրել

է, որ թեև մեղսագրվող ծանր հանցանքների կատարման հիմնավոր կասկածի առկայությունը վերաբերելի գործոն է, սակայն չի կարող ինքնին արդարացնել մինչդատական վարույթում երկարաժամկետ կալանքը: Միևնույն ժամանակ դատարանը առաջին դատական որոշումից հետո անդրադարձել է Դիմումատուի փախուստի դիմելու վտանգին ձերբակալումից միայն 2 տարի անց, այսինքն նշված հիմքի վերաբերյալ հիմնավորումների տրամադրումը տեղի է ունեցել մեծ ընդհատումներով, ինչը ևս չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին:

Սույն գործով ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել 2014 թ. փետրվարի 4-ի (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326)՝ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի վերաբերյալ ներկայացված Գործողությունների ծրագրերի շրջանակներում: Կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 118-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի ամրագրման վերաբերյալ, համաձայն որի կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ իրավապահ մարմինների կողմից քննության ընթացքում ողջամիտ ժամկետների չպահպանման և անհրաժեշտ ջանասիրության չգործադրման գործելաոճը դեռևս շարունակվում է ՀՀ-ում[62]:

Կալանք կիրառելու վերաբերյալ որոշման հիմնավորվածության վերաբերյալ տե՛ս Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման մասին մեկնաբանությունը:

[62] Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույց
http://www.ombuds.am/pages/downloadPdf/file_id/1748

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (6729/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Պետության կողմից չեն հիմնավորվել Դիմումատուի տնական կալանավորման «հիմնավոր և բավարար» ապացույցների առկայությունը: Մասնավորապես, որևէ կերպ չեն հիմնավորվել Դիմումատուի թաքնվելու կամ գործում ներգրավված վկաների վրա ճնշում գործադրելու վտանգի վերաբերյալ ենթադրությունները, դրանք որպես կալանքի հիմք վկայակոչելիս:
Սույն գործով ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել 2014 թ. փետրվարի 4-ի թիվ (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ի թիվ (DD(2014)326)՝ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի խումբ գործերի վերաբերյալ ներկայացված ծրագրերի շրջանակներում: ՀՀ կառավարությունը մասնավորապես վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը[63], որով ՀՀ վճռաբեկ Դատարանն արձանագրել է, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է հիմնավորի վճռի թե՛ փաստական, թե՛ իրավական հիմքերը: ՀՀ կառավարությունը նաև վկայակոչել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. հունիսի 15-ի թիվ ՍԴՈ-896 որոշումը, որում ՀՀ Սահմանադրական Դատարանն արձանագրել է. «օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:»

[63] Որոշումը ՀՀ իրավական տեղեկատվական համակարգում տեղադրված չէ:

Չնայած նախադեպային և պարտադիր կիրառման ենթակա դատական վերոնշյալ որոշումների, անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում այս խնդիրը դեռևս լուծված չէ[64]:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (44068/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20/03/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190) 15.01.2013 (DD(2013)107)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը կրկին արձանագրել է, որ անձին ձերբակալելուց կամ կալանավորելուց հետո դատարանի կամ այլ պաշտոնատար անձի մոտ անհապաղ տանելու պահանջից հնարավոր բացառություն չի նախատեսվում: Տվյալ դեպքում հետախուզման մեջ գտնվող և հետագայում հայտնաբերված անձին՝ դատավորի մոտ չտանելու հետևանքով տեղի է ունեցել ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ հոդվածի խախտում:
Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 Գործողությունների ծրագրեր՝ 2013 թ. հունվարի 15-ին (DD(2013)107), 2014 թ. փետրվարի 4-ին (DD(2014)190), 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326): ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել 2008 թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 0197/06/08 որոշման վերաբերյալ: Սույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ Դատարանն արձանագրել է, որ «քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը, կիակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:»

[64] Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույց
http://www.ombuds.am/pages/downloadPdf/file_id/1748

Համապատասխան դրույթը նաև ներառվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի մեջ, որի 297-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կայացվել է առանց մեղադրյալի մասնակցության, ապա մեղադրյալին Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո կալանավորելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում այդ անձին ներկայացնել իրավասու դատարան՝ նրա նկատմամբ կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու համար:

Ուստի սույն մասով վճիռը կարելի է գնահատել կատարված:

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/01/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 22.04.2014 (DD(2014)96) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (33376/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)435) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Պետության կողմից չեն ապացուցվել Դիմումատուի տնական կալանավորման «հիմնավոր և բավարար» ապացույցների առկայությունը և, որ անձին կալանավորելու այնպիսի հիմքերը, ինչպիսիք են՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ դատավարությունը դեռևս չի ավարտվել, և հետևաբար չեն համապատասխանում անձին մինչդատական կալանքի տակ պահելու համար ընդունելի որևէ հիմքին՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Միևնույն ժամանակ, Դատարանն արձանագրել է, որ կալանքի փոխարեն գրավ կիրառելու միջնորդության մերժումը, առանց անձի ազատազրկման կոնկրետ հանգամանքների հանդեպ դատական վերահսկողության ևս հակասում է ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասի սկզբունքներին:

Սույն գործով ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել 2014 թ. փետրվարի 4-ի թիվ (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ին թիվ (DD(2014)326)՝ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի վերաբերյալ ներկայացված գործողությունների ծրագրերի շրջանակներում:

Գրավի կիրառման վերաբերյալ ՀՀ կառավարությունը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ՎԲ-115/07-Ի գործով 2007 թ. հուլիսի 13-ի որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանը վկայակոչելով ՄԻԵԴ մի շարք որոշումներ, արձանագրել է, որ դրանցում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ այն պայմաններում, երբ գրավի կիրառմամբ անձին ազատ արձակելու հարցի քննարկման հնարավորությունը որոշակի գործերով ի սկզբանե արգելված է օրենսդրությամբ, ապա մինչդատական վարույթի

ժամանակ կալանքի հարցի լուծման նկատմամբ դատական վերահսկողության նման սահմանափակումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է:
ՀՀ կառավարությունը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը, ինչպես նաև հերթական անգամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 125-րդ հոդվածը, որով որպես գրավի կիրառման պարտադիր պայման չի սահմանվել հանցագործության ծանրությունը, այլ սահմանվել է, որ գրավի չափը որոշելիս հաշվի են առնվում մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրության աստիճանը և մեղադրյալի գույքային դրությունը:
Այնուամենայնիվ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում նշված խնդիրը լուծված չի կարելի համարել:
Կալանավորման հիմքում ընկած «վերաբերելի և բավարար» հիմնավորումների անհրաժեշտության վերաբերյալ տե՛ս Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման մեկնաբանությունը:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (44068/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20/03/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190) 15.01.2013 (DD(2013)107)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասը չի պարտադրում պայմանավորող երկրներին կալանքից ազատ արձակելու հարցի լուծման համար ստեղծել երկրորդ ատյան: Այնուամենայնիվ, պետությունը, որը ստեղծում է նման համակարգ, սկզբունքորեն կալանավորվածներին պետք է տրամադրի բողոքարկման միևնույն երաշխիքները, ինչպիսին առկա են առաջին ատյանի դատարանում: Տվյալ դեպքում

Վերաքննիչ դատարանի կողմից կալանքի կիրառման վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննության մերժումը այն հիմքով, որ գործը այլևս նախաքննության փուլում չի գտնվում, Դատարանի կողմից գնահատվել է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 Գործողությունների ծրագիր՝ 2013 թ. հունվարի 15-ին թիվ (DD(2013)107), 2014 թ. փետրվարի 4-ին թիվ(DD(2014)190), 2014 թ. փետրվարի 25-ին թիվ (DD(2014)326):

Գործողությունների ծրագրերում ՀՀ կառավարությունը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թ. նոյեմբերի 28-ի թիվ 0299/01/08 և 2008 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 0235/06/08 որոշումները, որոնցում ՀՀ վճռաբեկ Դատարանն արձանագրել է, որ դատական քննության ընթացքում կայացրած կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումների՝ 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով բողոքարկման իրավունքի սահմանափակումը նախաքննության ավարտման պատճառաբանությամբ անթույլատրելի է և հակասում է ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը:

ՀՀ կառավարությունը կրկին վկայակոչել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 396-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը. 1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը՝ (...) 2) խափանման միջոց կիրառելու վարույթի հարուցումը մերժելու, մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին. 3) մինչդատական վարույթի շրջանակներում կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (33376/07)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)435) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ դատավորի կողմից քննիչի միջնորդության քննարկելու եղանակը ինքնին բավարար է, որպեսզի Դատարանը արձանագրի, որ Դիմողը զրկված է եղել միջնորդության դեմ առարկելու արդյունավետ միջոցներից (մասնավորապես խորհրդակցական սենյակ հեռանալիս դատավորը քննիչից պահանջել է քրեական գործի ամբողջ նյութերը, որոնց Դիմողը ծանոթանալու հնարավորություն չի ունեցել): Դատարանը նաև արձանագրել է, որ կալանքի կիրառման վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի քննության մերժումը այն հիմքով, որ գործը այլևս նախաքննության փուլում չի գտնվում, դատարանի կողմից գնահատվել է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

Սույն գործով ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է տրամադրել 2014 թ. փետրվարի 4-ի (DD(2014)190) և 2014 թ. փետրվարի 25-ին (DD(2014)326)՝ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի խումբ գործերի վերաբերյալ ներկայացված ծրագրերի շրջանակներում:

Կողմերի հավասարության պայմանի ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 21-րդ հոդվածով (Հոդված 21. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը) ամրագրված երաշխիքների ապահովման մասին: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե գործնականում ինչ երաշխիքներ են առկա ապագայում նմանատիպ խախտման կանխարգելելու նպատակով:

Կալանք կիրառելու մասին որոշման բողոքի քննությունը մերժելու վերաբերյալ տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մինասյանն ընդդեմ Հայաստանի (44837/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	08/07/2014
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Չի ներկայացվել[65]
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Կալանք կիրառելու մասին որոշման բողոքի քննությունը մերժելու վերաբերյալ տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/01/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 22.04.2014 (DD(2014)96) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ կողմերի

[65] Այնուամենայնիվ ներառվել է Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործերի խմբի մեջ, ուստի այս գործ, ուստի այս գործով ներկայացված ծրագրերը վերաբերելի են նաև Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռի կատարմանը:

հավասարությունն ապահովված չի համարվում, եթե պաշտպանին մերժում են տրամադրել գործով նախաքննությամբ ձեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարևոր են նրա պաշտպանյալին կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար:

Կողմերի հավասարության ապահովման վերաբերյալ տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում

Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (23978/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 12.08.2013 (DH-DD(2013)850)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը գործի քննության ժամանակահատվածում չի սահմանել պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունք՝ այդ թվում նաև պատճառված Կոնվենցիայի 5-րդ հոդվածի առաջին 4 կետերից որևէ մեկի խախտման հետևանքով:

Սույն գործով ՀՀ կառավարությունը 2013 թ օգոստոսի 12-ին ներկայացրել է թիվ DH-DD(2013)850 Գործողությունների զեկույցը:

ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մասին: Սույն լրացումը որոշ թերություններով կատարվել է 2014 թ. մայիսի 19-ին թիվ ՀՕ-21-Ն օրենքով, և լրամշակվել 2015 թ. դեկտեմբերի 21-ին թիվ ՀՕ-184-Ն օրենքով:

Այսպիսով, տվյալ մասով վճիռը կարելի է համարել կատարված:

Սահակյանն ընդդեմ Հայաստանի (66256/11)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Ուժի մեջ չի մտել
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Չի ներկայացվել
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Սույն գործով վճիռը 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս ուժի մեջ չի մտել, ուստի չի ներկայացվել նաև Գործողությունների ծրագիր:

ՄԻԵԿ 6-րդ հոդված՝ Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կվնասեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:
3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.
ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,
բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,
գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,
դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,
ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

2015 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 6-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 23 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 25%: Այդ գործերն են.

- Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (36549/03)
- Գալստյանն ընդդեմ Հայաստանի (26986/03)
- Նիկողոսյանը և Մելքոնյանը ընդդեմ Հայաստանի (11724/04; 13350/04)
- Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն-ն ընդդեմ Հայաստանի (21638/03)
- Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (33268/03)
- Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (31237/03)
- Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (41698/04)
- Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (22390/05)
- Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (No. 2) 22571/05
- Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի (45081/04)
- Կարապետյանն ընդդեմ Հայաստանի (22387/05)
- Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի (31761/04)

- Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (25083/05)
- Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի (8088/05)
- Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (34320/04)
- Գրիգորյան ընդդեմ Հայաստանի (3627/06)
- Շոլոխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի Հանրապետության (40358/05)
- Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (40094/05)
- Մելիքյանն ընդդեմ Հայաստանի (9737/06)
- Նալբանդյանը ընդդեմ Հայաստանի (9935/06; 23339/06)
- Շամոյանն ընդդեմ Հայաստանի (18499/08)
- Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի (7984/06)
- Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (22343/08)



Գծապատկեր 8

Նշված գործերում Դատարանի կողմից արձանագրվել են թե՛ իրավակիրառ պրակտիկայի, թե՛ օրենսդրական խնդիրներ:

Մասնավորապես արձանագրվել են քրեական գործի վարույթի տևողության ողջամիտ ժամկետների խախտում, երկրորդ ատյանի դատարանում հրապարակային քննության պահանջների չպահպանում, այն դեպքում երբ Դատարանն անդրադարձել է թե՛ փաստական, թե՛ իրավական հանգամանքներին, Դիմումատուների բացակայությամբ նիստ գումարելու (այն դեպքում, երբ փորձ չի կատարվել պարզել, թե արդյոք Դիմումատուները պատշաճ կերպով տեղեկացված են եղել նիստի վերաբերյալ), խոշտանգումների միջոցով ձեռք բերված

ապացույցների օգտագործման, վճռի փաստական և իրավական ոչ բավարար հիմնավորման, միջոցների անբավարարությունը որպես օրինական ուժի մեջ մտած վճռի չկատարման արդարացում վկայակոչելու, թույլտվություն ունեցող փաստաբանի միջոցով Վճռաբեկ բողոքի ներկայացման պահանջի առկայության, Վճռաբեկ դատարանի կողմից ձևականությամբ ու պատշաճ ջանասիրության դրսևորման արդյունքում վճռաբեկ բողոքի մերժման, կրկին բերված Վճռաբեկ բողոքը առանց որևէ իրավական հիմքի վարույթ ընդունելու, քննելու և բավարարելու արդյունքում res judicata սկզբունքի խախտման, Դիմումատուների և նրանց փաստաբանների անվտանգությունը և նրանց գործառույթները պատշաճ ձևով կատարելու համար բավարար պայմաններ չապահովելու, վճռորոշ դեր ունեցող վկաների գտնվելու վայրը պարզելու ուղղությամբ բավարար ջանք չգործադրելու, անձի անմեղության կանխավարկածի խախտման խնդիրներ:

Սույն խնդիրներից դեռևս առավել լուրջ համակարգային լուծում են պահանջում գործի վարույթի տևողության ողջամիտ ժամկետների պահպանման, Դատարանի վճռի փաստական և իրավական բավարար հիմնավորումների ապահովման հիմնախնդիրները:



Գծապատկեր 9

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում

Գրիգորյան ընդդեմ Հայաստանի (3627/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17/12/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 13.11.2013 (DD(2013)1235)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ քրեական գործի վարույթի տևողությունը, որով Դիմողը ներգրավված է եղել սկզբից որպես վկա, իսկ հետագայում որպես կասկածյալ, եղել է չափազանց երկար և չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջին:

Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը 2013 թ. նոյեմբերի 13-ին ներկայացրել է թիվ DD(2013)1235 Գործողությունների ծրագիրը: ՀՀ կառավարությունը մասնավորապես հայտնել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 12-րդ և 194-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումների վերաբերյալ: Այսպիսով, բացի այն, որ ՀՀ քրեական նոր դատավարության օրենսգիրքը դեռևս չի ընդունվել և չի գործում, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում դեռևս շարունակում է չլուծված մնալ քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման հիմնախնդիրը[66]:

[66] Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույց
http://www.ombuds.am/pages/downloadPdf/file_id/1748

Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի (45081/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/01/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 24.10.2014 (DD (2014)1324)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)38)
Կատարման վիճակը	Կատարված է

Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ գործի հրապարակային քննության պահանջի չպահպանումը երկրորդ և երրորդ ատյանների դատարաններում կարող է արդարացվել կոնկրետ վարույթի առանձնահատկություններով պայմանավորված, պայմանով, որ առաջին ատյանի դատարանում անցկացվել է հրապարակային դատաքննություն: Այնուամենայնիվ, տվյալ դեպքում վճիռը վերանայող դատարանն ըստ էության անդրադարձել է գործի թե՛ փաստական, թե՛ իրավական հանգամանքներին, միևնույն ժամանակ իր որոշումը կայացրել է առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննված երկու ոստիկանների ցուցմունքների հիման վրա: Ուստի գործի որոշակի հանգամանքներում Դիմումատուի մեղավորությունը կամ անմեղությունը չէր կարող որպես արդար դատաքննության հարց պատշաճ կերպով որոշվել առանց Դիմումատուի և նշված երկու ոստիկանության աշխատակիցների անձամբ տված ցուցմունքների ուղղակի գնահատականի:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է ներկայացրել 2014 թ. հոկտեմբերի 4-ին թիվ DD (2014)1324 Գործողությունների ծրագրով: Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը հայտնել է վարչական դատավարության իրավունքի ոլորտում կատարված փոփոխությունների մասին, ինչպես նաև ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեության դադարեցման մասին:

Սույն գործով ԵԽ նախարարների կոմիտեի կողմից վճռի կատարման վերահսկողության գործընթացն ավարտվել է 2015 թ. մարտի 15-ի թիվ CM/ResDH(2015)38 եզրափակիչ բանաձևով: Նախարարների կոմիտեն վճռի ամբողջական կատարման համար անհրաժեշտ թե՛ անհատական, թե՛ ընդհանուր բնույթի միջոցառումները համարել է իրականացված:

Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն-ն ընդդեմ Հայաստանի (21638/03)- կատարված

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/06/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 02.12.2011 (CM/ResDH(2011)185)
Վարույթի ընթացքը	Փակված է 02.12.2011 (CM/ResDH(2011)185)
Կատարման վիճակը	Կատարված է

Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանը մերժելով քննել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Դիմումատու ընկերության միջնորդությունը, ըստ երևույթին, ըստ անալոգիայի կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը, որի համաձայն պետական տուրքի վճարումից չեն կարող ազատվել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները, խախտվել է Դիմումատու կազմակերպության դատարանի մատչելիության իրավունքը: Միևնույն ժամանակ, Տնտեսական դատարանը և Վերաքննիչ տնտեսական դատարանը ցուցաբերել են հակառակ մոտեցում:

Սույն գործով վճռի կատարման հանդեպ վերահսկողության գործընթացը փակվել է 2011 թ. դեկտեմբերի 2-ին թիվ CM/ResDH(2011)185 Եզրափակիչ բանաձևով: Որպես եզրափակիչ բանաձևի հավելված ներկայացված է նաև կառավարության Գործողությունների ծրագիրը: Կատարման հանդեպ վերահսկողության գործընթացը փակվել է, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (70-րդ հոդվածի 3-րդ մաս) և «Պետական տուրքի մասին» (22-րդ հոդվածի 4-րդ մաս) համապատասխան հոդվածները վերացվել են: Ավելին, 2005 թ. նոյեմբերի 27-ի Սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մեջ ևս ամրագրվել է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ (42.1-րդ հոդված): Ուստի սույն մասով վճիռը կարելի է համարել կատարված:

Նիկողոսյանը և Մելքոնյանը ընդդեմ Հայաստանի (11724/04; 13350/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	06/03/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.09.2011 (CM/ResDH(2011)89)
Վարույթի ընթացքը	Փակված է 14.09.2011 (CM/ResDH(2011)89)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Նիկողոսյանը և Մելիքյանը ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանի կողմից Դիմումատուների բացակայությամբ նիստ գումարելով ինչպես հարկն է չի ստուգել, թե արդյոք Դիմումատուները պատշաճ կերպով տեղեկացված են եղել նիստի մասին: Այս սխալը չի ուղղել նաև Վճռաբեկ դատարանը, որը կարող էր գործը ետ ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Սույն գործով կայացված վճիռը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից գնահատվել է կատարված և 2011 թ. սեպտեմբերի 14-ին կայացվել է թիվ CM/ResDH(2011)89 եզրափակիչ բանաձև: Որպես Բանաձևի հավելված ներկայացված է նաև վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից տրամադրած տեղեկատվությունը: Տվյալ խնդիրը զուտ իրավակիրառ պրակտիկայի խնդիր է, սակայն ՀՀ կառավարության կողմից չեն ներկայացվել նաև վիճակագրական տվյալներ, որոնք կփաստեին, որ տվյալ խնդիրը տարածված չէ և համակարգային բնույթ չի կրում:

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (36549/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28/09/2007
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 08.06.2011 (CM/ResDH(2011)40)

Վարույթի ընթացքը	Փակված է 08.06.2011 (CM/ResDH(2011)40)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանական

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանի կողմից այնպիսի ապացույցի օգտագործումը, որը ձեռք է բերվել խոշտանգումների միջոցով, անկախ նրանից, թե ինչ ազդեցություն է ունեցել տվյալ ցուցմունքը (նույնիսկ, եթե դատապարտման համար նման ապացույցի ընդունելիությունը չուներ վճռորոշ նշանակություն), ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար:

Սույն գործով կայացված վճիռը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից գնահատվել է կատարված և 2011 թ. հունիսի 8-ին կայացվել է թիվ CM/ResDH(2011)40 վերջնական բանաձև: Որպես Բանաձևի հավելված ներկայացված է նաև վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Տրամադրված տեղեկատվությամբ ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի կարգավորումների վերաբերյալ: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարությունը ընդգծել է, որ նմանատիպ վճիռ ՀՀ ներպետական դատարանների կողմից այլևս չի կայացվել:

Չնայած վերոգրյալին, դեռևս ՀՀ դատարանների կողմից առկա է հակասական գործելաոճ վատ վերաբերմունքի կիրառման միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործման վերաբերյալ: Մի կողմից անձի կողմից դատարանում հնչեցրած հայտարարությունը այն մասին, որ ցուցմունքների ընթացքում նրա հանդեպ կիրառվել է վատ վերաբերմունք չեն արժանանում պատշաճ քննության, մյուս կողմից, նույնիսկ այն դեպքում, երբ արձանագրվում է, որ ցուցմունքը ձեռք է բերվել վատ վերաբերմունքի արդյունքում, չեմ հանվում գործի նյութերից, այլ մնում են գործի նյութերում, ինչը մտահոգություն է հարուցում, թե որքանով է այդ ապացույցը ազդում դատարանի ներքին համոզմունքի վրա:

Դատարանների կողմից բռնության միջոցով ձեռք բերված խոստովանական ցուցմունքների կիրառման հիմնախնդիրը արձանագրել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն իր 2012 թ. վիճակի դիտարկման արդյունքում հրապարակված Ամփոփ եզրակացություններում (CAT/C/ARM/CO/3)[67]: 2016 թ. ՀՀ կողմից ներկայացվելիք Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ կոնվենցիայի կատարման վիճակի մասին Ազգային զեկույցի վերաբերյալ ներկայացված Նախնական

[67] Concluding observations of the Committee against Torture. 6 July 2012 http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT%2fC%2fARM%2fCO%2f3&Lang=en

խնդիրների (CAT/C/ARM/QPR/4)[68] ցանկում Կոմիտեն ևս ներառել է հարցադրումներ այն հարցի շուրջ, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել ՀՀ կողմից ապահովելու, որպեսզի խոշտանգումների միջոցով ձեռք բերված խոստովանական ցուցմունքները չօգտագործվեն որպես ապացույց, և այն դատական գործերի քանակի վերաբերյալ, որոնց քննությունը կասեցվել է, հաշվի առնելով, որ դատաքննության ընթացքում առաջացել է գործի մասնակցի հանդեպ խոշտանգումների միջոցով խոստովանական ցուցմունքի ձեռք բերելու վերաբերյալ բողոքը քննելու անհրաժեշտություն:

Այսպիսով, թեև տվյալ գործով վճռի կատարման վարույթը Նախարարների կոմիտեի կողմից փակվել է, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ ՀՀ-ում վատ վերաբերմունքի կիրառմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը դատարանների կողմից դեռևս մտահոգիչ է:

Շոլոխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի Հանրապետության (40358/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	31/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 17.09.2013 (DD(2013)1193) 03.07.2015 (DD(2015)739)
Վարույթի ընթացքը	Փակված է 10.09.2015 (RES(2015)116)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

[68] List of issues prior to submission of the fourth periodic report of Armenia, due in 2016
https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/027/56/PDF/G1502756.pdf?OpenElement

Շոլոխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի գործով Դատարանն անդրադարձել է վճիռը ճանաչելու և կատարելու հայցի վերաբերյալ կայացված Վերաքննիչ դատարանի վճռի հիմնավորվածությանը և արձանագրել է, որ վճռի եզրակացությունը հիմնավորված չէ, ինչը հակասում է արդար դատաքննության պահանջներին: Խնդիրը չի լուծել նաև Վճռաբեկ դատարանը՝ անփոփոխ թողնելով Վերաքննիչ դատարանի որոշումը:

Սույն գործով կայացված վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր՝ 2013 թ. սեպտեմբերի 17-ին թիվ DD(2013)1193 և 2015 թ. հուլիսի 3-ին թիվ DD(2015)739: 2015 թ. սեպտեմբերի 15-ին ընդունված թիվ CM/ResDH(2015) Եզրափակիչ բանաձևով գործով վճռի կատարման քննությունը փակվել է: Ներկայացված տեղեկատվության շրջանակներում ՀՀ կառավարությունը մասնավորապես վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Մասնավորապես ՀՀ կառավարությունը վկայակոչել է 2006 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը, որում արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է պատճառաբանի վճռի փաստական և իրավական հիմնավորումները: Այստեղ կարևոր է նաև նշել, որ չնայած ՀՀ կառավարության կողմից վկայակոչվել է ՀՀ վճռաբեկ դատարանի տվյալ որոշումը, սակայն այն հրապարակված չէ, ՀՀ տեղեկատվական իրավական համակարգում հրապարակված են միայն 2007 թ.-ից հետո թվագրմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները: Ի լրումն տվյալ որոշման ՀՀ կառավարությունը վկայակոչել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 և 2010 թ. հունիսի 15-ի թիվ ՍԴՈ-896 որոշումները, ինչպես նաև և 2010 թ. մարտի 26–ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0058/11/09 քրեական գործի մասին, 2014 թ. մարտի 28-ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0045/01/13 ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

Թեև ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից տվյալ գործով վճռի կատարման հանդեպ քննությունը գնահատվել է ավարտված, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումները մեկնաբանում և սահմանում են բոլոր ատյանների դատարանների որոշումների, ներառյալ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը ետ վերադարձնելու մասին որոշման հիմնավորման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի բողոքը ետ վերադարձնելու որոշման հիմնավորման պահանջը դեռևս ամբողջությամբ չի կատարվում:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (25083/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	4/10/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 22.04.2014 (DD(2014)551) 24.07.2015 (DD(2015)833rev)
Վարույթի ընթացքը	Փակված է 24.09.2015 (CM/ResDH(2015)142)
Կատարման վիճակը	Կատարված է

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Դիմումատուի կողմից ի լրումն վճռաբեկ բողոքի ներկայացված այն լրացուցիչ փաստարկների մերժման արդյունքում, որոնք պայմանավորված են եղել վերաքննիչ դատարանի կողմից կայացված վճիռը ստանալու հետ (ընդ որում լրացուցիչ փաստարկները ներկայացվել են վերաքննիչ բողոքը ստանալուց մի քանի օր անց, այսինքն առանց անհարկի ուշացման), լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու վերաբերյալ հստակ կանոնների բացակայության պայմաններում, խախտվել է Դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքը:

Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր 2014թ. ապրիլի 22-ին թիվ DD(2014)551 և 2015 թ. հուլիսի 24-ին թիվ DD(2015)833rev: 2015 թ. սեպտեմբերի 24-ին ընդունված թիվ CM/ResDH(2015)142 Եզրափակիչ բանաձևով գործով վճռի կատարման քննությունը փակվել է: Վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը հայտնել է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի կարգավորումների մասին, ինչպես այն մասին, որ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի պահանջի ապահովման դեպքում՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում մասնակիցներին ուղարկելու դեպքում ևս նման խնդիր չէր առաջանա:

Կարելի է արձանագրել, որ ներկայումս նշված խնդիրը համակարգային առումով բացակայում է:

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի (31761/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/03/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 18.11.2014 (DD(2014)1419) 16.02.2015 (DD(2015)207)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)37)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը կրկին արձանագրել է, որ իշխանությունները չեն կարող վկայակոչել միջոցների անբավարարությունը որպես օրինական ուժի մեջ մտած վճռի չկատարման արդարացում:

Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր 2014 թ նոյեմբերի 18-ին թիվ DD(2014)1419 և 2015 փետրվարի 16-ին թիվ DD(2015)207: Իսկ 2015 թ. մարտի 12-ի թիվ CM/ResDH(2015)37 Եզրափակիչ բանաձևով գործով վճռի կատարման քննությունը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից փակվել է: Ներկայացված ծրագրերում ՀՀ կառավարությունը հայտնել է Դատական ակտերի հարկադիր ծառայության գործունեության ոլորտում իրականացված փոփոխությունների, մասնավորապես էլեկտրոնային համակարգի ներդրում, և ծառայությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալի ավելացման վերաբերյալ: Թեև գործով վճռի կատարման գործընթացը փակված է, այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ տվյալ խնդիրը դեռևս արդիական է[69]:

[69] Armenia's ENP implementation in 2014
http://www.osf.am/wp-content/uploads/2015/05/OSF_POS_ENP_ARMENIA_2014.pdf

Շամոյանն ընդդեմ Հայաստանի (18499/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	07/10/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրանում է 07/04/2016
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Շամոյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն անդրադարձել է Վճռաբեկ դատարանում հանդես գալու համար պարտադիր նախապայմանին՝ թույլտվություն ունեցող փաստաբանի միջոցով Վճռաբեկ բողոքի ներկայացմանը: Հաշվի առնելով, որ Դիմումատուն չի ունեցել անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն և որ Վճռաբեկ դատարան դիմելու իրավունքը կախման մեջ է ընկել նրա ֆինանսական վիճակից: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանում հանդես գալու լիազորություն ունեցող փաստաբանների կողմից ներկայացվելու ընթացակարգային պահանջի պայմաններում իրավաբանական օգնության դիմելու հնարավորության բացակայությունը անհամաչափորեն սահմանափակել է Դիմումատուի՝ դատարան դիմելու իրավունքը:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը Գործողությունների ծրագիր դեռևս չի ներկայացրել: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2009թ. հունվարի 1-ից նշված ընթացակարգային պահանջն այլևս չի գործում: Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանը 2008թ. հոկտեմբերի 8-ին թիվ ՍԴՈ 765 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության (2014 թ. հունվարի 7-ին ուժի մեջ մտած), ՀՀ քրեական դատավարության (2014 թ. հունիսի 10-ին կատարված թիվ ՀՕ-48-Ն փոփոխությունով) և ՀՀ քաղաքացիական դատավարության (2014 թ. հունիսի 10-ին կատարված թիվ ՀՕ-49-Ն) օրենսգրքերի շրջանակներում ՀՀ օրենսդիրը փորձեց սահմանել ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու մեկ այլ ընթացակարգային պայման՝ քաղաքացիների անունից

ՀՀ վճռաբեկ դատարան բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանները: Այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրական դատարանը 2015 թ. մարտի 17-ի թիվ ՍԴՈ-1196 ՀՀ քրեական դատավարության համապատասխան իրավակարգավորումը այն մասնակիցների մասով, ովքեր չունեն պաշտպան և որոնց համար օրենքով սահմանված կարգով երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը, ճանաչեց ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր: ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթները ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր են ճանաչվել ՀՀ Սահմանադրական դատարանի համապատասխանաբար թիվ ՍԴՈ-1192 և թիվ ՍԴՈ-1220 որոշումներով:

Նալբանդյանը ընդդեմ Հայաստանի (9935/06; 23339/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Դիմումատուի և նրա փաստաբանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի մերժման հիմնախնդրին, արձանագրելով, որ Վճռաբեկ դատարանը, մերժելով ներկայացված բողոքը գործել է ավելորդ ձևականությամբ ու պատշաճ ջանասիրություն չի գործադրել, որի արդյունքում խախտվել է այդ Դիմումատուի Վճռաբեկ դատարան դիմելու իրավունքը:

Սույն գործով վճռի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից տեղեկատվություն չի ներկայացվել:

Մելիքյանն ընդդեմ Հայաստանի (9737/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19/05/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Չի ներկայացվել
Վարույթի ընթացքը	Փակված է 06.04.2014 (CM/ResDH(2014)44)
Կատարման վիճակը	Կատարված է

Մելիքյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օր-ի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության կիրառմամբ մերժելով Դիմումատուի բողոքը ըստ էության քննելը խախտել է անձի դատարանի մատչելիության իրավունքը:

Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից չի ներկայացվել Գործողությունների ծրագիր կամ զեկույց: Այնուամենայնիվ 2014թ. ապրիլի 6-ի ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/ResDH(2014)44 Եզրափակիչ բանաձևով գործով վճռի Վարույթի ընթացքը փակվել է: Խախտման պատճառ հանդիսացող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օր-ի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 2006 թ. նոյեմբերի 16-ի թիվ ՍԴՈ - 665 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Իսկ 2007 թ. Նոյեմբերի 28-ի թիվ ՀՕ-277-Ն օրենսդրական փոփոխությամբ տվյալ հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած:

Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (22343/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Դեռևս ուժի մեջ չի մտել
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	----
Վարույթի ընթացքը	----
Կատարման վիճակը	----

Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելուց հետո, կրկին բերված բողոքը առանց որևէ իրավական հիմքի վարույթ ընդունելու, քննելու և բավարարելու արդյունքում խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված res judicata սկզբունքը:
Սույն որոշումը 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ուժի մեջ չի մտել:

Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի (7984/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Դեռևս ուժի մեջ չի մտել
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	----
Վարույթի ընթացքը	----
Կատարման վիճակը	----

Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուն

զրկված է եղել դատարանի մատչելիության իրավունքից, հաշվի առնելով, որ Արդարադատության խորհուրդը իրենից չի ներկայացրել անկախ դատական մարմին, քանզի չի համապատասխանել «անկախ» լինելու նվազագույն չափանիշներին և ՔԴՕ-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության կիրառմամբ տվյալ գործի շրջանակներում դրված սահմանափակումը (այն է՝ Դիմումատուին պաշտոնից ազատելու մասին նախագահի հրամանագրի նկատմամբ դատական վերահսկողության սահմանափակումը) խախտում է «դատարան դիմելու իրավունքի» բուն էությունը (Տե՛ս նաև Մելիքյանն ընդդեմ Հայաստանի գործով մեկնաբանությունները):

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով

Գալստյանն ընդդեմ Հայաստանի (26986/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15/02/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ պայմանները, որոնց առկայությամբ Դիմումատուի նկատմամբ քրեական վարույթ է իրականացվել՝ սկսած նրան ձերբակալելու պահից մինչև դատապարտումը, եղել են այնպիսին, որ հնարավորություն չեն տվել նրան պատշաճ կերպով ծանոթանալու և գնահատելու իր նկատմամբ ներկայացված մեղադրանքը ու իր դեմ ներկայացված ապացույցները, և մշակելու կենսունակ իրավաբանական ռազմավարություն իր պաշտպանությունը իրականացնելու նպատակով:

Սույն գործով կայացված վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը 2015 թ. ապրիլի

16-ին ներկայացրել է թիվ DD(2015)434 Գործողությունների ծրագիրը: Ներկայացված Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումների մասին, վարչական կալանքի ինստիտուտի վերացման և ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքի ընդունման վերաբերյալ, որով սահմանվել են մի շարք երաշխիքներ, որոնք էլ իրենց հերթին ապահովում են, վարչական դատավարության համապատասխանությունը ընդհանուր դատավարական ընթացակարգերին, որի ընթացքում ապահովվում են հիմնարար դատավարական իրավունքները:

Անհրաժեշտ է արձանագրել, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կատարվել են մի շարք փոփոխություններ, այնուամենայնիվ գործնականում անձի վարչական ձերբակալման ընթացքում ապահովվող երաշխիքների տեսանկյունից դեռևս առկա են որոշ խնդիրներ:

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (34320/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (31237/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (41698/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Կարապետյանն ընդդեմ Հայաստանի (22387/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/01/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (22390/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (33268/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/12/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (No. 2) 22571/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	16/09/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետով

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի (9935/06; 23339/06)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռով Դատարանն արձանագրել է, որ Դատարանները և Կառավարությունը որևէ կոնկրետ գործողություն չեն իրականացրել (չեն նշել նման գործողության մասին) Դիմումատուների և նրանց փաստաբանների անվտանգությունը և նրանց գործառույթները պատշաճ ձևով կատարելու համար բավարար պայմաններ ապահովելու ուղղությամբ, այն էլ առաջին և երկրորդ ատյանի դատարաններում դատաքննության ժամանակ, որտեղ հրապարակային դատական նիստերի ընթացքում պետք է պարզվեն փաստերի և իրավունքի հետ կապված հարցեր:

Սույն գործով ՀՀ Կառավարությունը Գործողությունների ծրագիր կամ զեկույց դեռևս չի ներկայացրել:

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ կետի դ) ենթակետ

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի (8088/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 24.04.2013 (DD(2013)493)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ սահմանափակվել է վճռորոշ դեր ունեցող վկաներին Դիմումատուի հարցաքննելու իրավունքը՝ առանց հիմնավորման, իսկ իշխանությունները բավականաչափ ջանք չեն գործադրել, նշված վկաների գտնվելու վայրը պարզելու համար, կամ ճշտելու համար, արդյոք այդ վկաների բացակայությունը արդարացված է, թե ոչ:

Սույն գործով ՀՀ կառավարությունը 2013 թ. ապրիլի 24-ին ներկայացրել է թիվ DD(2013)493 Գործողությունների ծրագիրը, որով կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական

դատավարության օր-ի նախագծով նախատեսվող կարգավորումների մասին:
Մասնավորապես, ՀՀ կառավարությունը հայտնել է ցուցմունքների դատական դեպոնացման (42-րդ գլուխ), տեսահաղորդակցության, տեխնիկական միջոցների օգտագործմամբ հարցաքննության կատարման (333-րդ հոդված, այն դեպքում, երբ հարցաքննվողի ներկայությունը դատարանում անհնար է կամ կարող է սպառնալ նրա անվտանգությանը կամ վտանգել ցուցմունքի արժանահավատությունը), մինչդատական վարույթում կամ դատարանում Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ տված ցուցմունքի հրապարակման թույլատրելիության պայմանների սահմանման մասին (336-րդ հոդված):

Թեև սույն կարգավորումները ներառվել են ՀՀ քրեական դատավարության օր-ի նախագծում, սակայն Նախագիծը դեռևս ընդունված չէ, վճիռը տվյալ մասով չի կարելի գնահատել կատարված:

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (40094/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.02.2015(DD(2015)206) 25.02.2014(DD(2014)328)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիման վրա (մինչ 2006 թ. մայիսի 25-ը կատարված փոփոխությունները)՝ կատարվածի քավումը տուժանքի միջոցներով, իրավունքի սահմանափակումներով, այլ զրկանքներով, որն անձը կրել է իր կատարած արարքի կապակցությամբ,

քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ ՀՀ դատախազի որոշումը խախտում է անձի անմեղության կանխավարկածը:
Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր՝ 2014 թ. փետրվարի 25-ին թիվ DD(2014)328 և 2015 թ. փետրվարի 16-ին թիվ DD(2015)206: Գործողությունների ծրագրերով ՀՀ կառավարությունը հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության համապատասխան հոդվածի կետը ուժը կորցրել է նույնիսկ մինչ ՄԻԵԴ կողմից տվյալ վճռի կայացումը, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով չի նախատեսվում նշված հիմքերով քրեական հետապնդում և կարճում:
Սույն մասով վճիռը կարելի է համարել կատարված:

ՄԻԵԿ 7-րդ հոդված՝ Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:
2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա կանոնի խախտում ՀՀ դեմ կայացված վճիռներով ՄԻԵԿ կողմից 2007-2015 թթ-ին չի արձանագրվել:

ՄԻԵԿ 8-րդ հոդված՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ

բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

2015 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 8-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 2 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 2%: Այդ գործերն են.

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի (13216/05)
Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)

Նշված գործերից՝ Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործը վերաբերում է իրավական պետության կայացման և ՀՀ-ում արդիական և առավել վիճահարույց խնդիրներին՝ հատուկ ծառայությունների կողմից գաղտնալսման իրականացման ընթացակարգերին: Սույն գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է ՀՀ-ում առկա այն հիմնական խնդիրները, որոնք դեռևս լուծված չեն և լուրջ վտանգի տակ են դնում անձի անձնական կյանքի պաշտպանությունը: Ինչ վերաբերում է Չիրագովն ընդդեմ Հայաստանի գործին, ապա այս գործով արձանագրվել է կոնֆլիկտի հետևանքով բռնի տեղահանված տուժած քաղաքացիների՝ բռնի տեղահանվածների հիմնախնդիրը, որի վերացումը պայմանավորված է քաղաքական լուծումներով:



Գծապատկեր 10

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (22491/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/01/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 22.04.2014 (DD(2014)96) 25.02.2014 (DD(2014)326) 04.02.2014 (DD(2014)190)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն անդրադարձել է գաղտնալսման՝ «օրենքին համապատասխան» իրականացման խնդիրներին, որտեղ օրենքը պետք է հասանելի լինի շահագրգիռ անձին և կանխատեսելի լինի իր հետևանքների առումով: Մասնավորապես Դատարանն արձանագրել է, որ Հայաստանի օրենսդրությամբ սահմանված չեն եղել ոչ իրավախախտումների տեսակները, ոչ էլ այն անձանց շրջանակը, որոնց դեպքում կարելի է թույլատրել գաղտնալսումը: Օրենքը չի մանրամասնել այն հանգամանքները կամ հիմքերը, որոնց առկայության դեպքում կարելի էր նման միջոցառման իրականացման համար որոշում կայացնել, նախատեսված չէր գաղտնալսման համար հստակ առավելագույն ժամկետ, միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա կիրառման նկատմամբ դատական կամ նմանաբնույթ այլ անկախ հսկողություն, տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահելու, և ոչնչացնելու որևէ կանոն: Օրենքով նաև չէր պահանջվում գաղտնալսումը դադարեցնելուց հետո ծանուցել այն անձին, ում նկատմամբ այն կիրառվել էր՝ այն դեպքերում, երբ նման ծանուցումն այլևս չէր վտանգի գաղտնալսման նպատակը:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 Գործողությունների ծրագիր՝ 2014 թ. փետրվարի 4-ին թիվ (DD(2014)190), 2014 թ. փետրվարի 25-ին թիվ (DD(2014)326) և 2014 թ. ապրիլի 22-ին թիվ (DD(2014)96): Նշված Գործողությունների ծրագրերից միայն վերջինն է անդրադառնում նշված խախտման

վերացման ուղղված միջոցառումների իրականացմանը: Ներկայացված տեղեկատվությամբ Կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսված մի շարք կարգավորումների մասին, որոնց շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեության մի շարք գործողություններ դասվել են գաղտնի քննչական գործողությունների շարքին և բերվել քրեական դատավարության օրենսդրության դաշտ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով սահմանվել են այն հանցագործությունների տեսակները, որոնց դեպքում կարող է կիրառվել գաղտնալսումը (249-րդ հոդված), իսկ որպես գաղտնի քննչական գործողությունների կիրառման առավելագույն ժամկետ սահմանվել է 12 ամիս (250-րդ հոդված):

Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ չնայած ներկայացված տեղեկատվությանը, բացի այն, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը դեռևս ընդունված չէ, նաև նույնիսկ նախագծով նույնիսկ սահմանված չեն բոլոր երաշխիքները՝ գաղտնալսումը ՄԻԵԴ չափանիշներին համապատասխան իրականացնելու համար: Սույն խնդիրները նաև ներկայացված են նաև «ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ դատախազության գործունեությունը կարգավորող օրենսդրության համեմատական վերլուծությունն ըստ Եվրոպայի Խորհրդի չափորոշիչների» ՀՔԱՎ ուսումնասիրության մեջ[70]:

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի (13216/05)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	16/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 16/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

[70] «ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ դատախազության գործունեությունը կարգավորող օրենսդրության համեմատական վերլուծությունն ըստ Եվրոպայի Խորհրդի չափորոշիչների» ՀՔԱՎ ուսումնասիրություն, (էջ 28-33): http://hcav.am/wp-content/uploads/2015/06/ԱԱԾ_ՀՔԾ_Դատախ._վերջնական_հրապարակած.pdf

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուների՝ իրենց բնակավայրից հարկադիր տեղահանման և վերադառնալու հնարավորության բացակայության պայմաններում տեղի է ունեցել անձնական և ընտանեկան կյանքի և բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքի անհիմն խախտում: Դիմումատուների կապը տվյալ տարածաշրջանի հետ հիմնավորվել է հետևյալ հանգամանքներով՝ Դիմումատուներից գրեթե բոլորն ամուսնացել և երեխաներ են ունեցել այդ վայրում, այդտեղ նրանք վաստակել են իրենց ապրուստը, և այդտեղ են ապրել նրանց նախնիները, նրանք նաև կառուցել են տներ, որոնք պատկանել են իրենց: Միևնույն ժամանակ, Դիմումատուները կամովին չեն բնակություն հաստատել որևէ այլ վայրում, այլ ստիպված են բնակվում այլ վայրերում որպես ներքին տեղահանված անձինք:
Սույն գործով ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագիր կամ զեկույց չի ներկայացվել:

ՄԻԵԿ 9-րդ հոդված՝ Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:
2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

2015 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 8-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 3 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 4 %: Այդ գործերն են.

Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի 37819/03
Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի 37821/03
Բայաթյանն ընդդեմ Հայաստանի 23459/03

Նշված բոլոր երեք գործերը վերաբերել են «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամների՝՝ խղճի և համոզմունքների պահանջներից ելնելով զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելու և, որպես հետևանք քրեական պատիժ կրելու հիմնախնդրին: Նշված խախտումը ընդհանուր առմամբ կարելի է գնահատել վերացված:



Գծապատկեր 11

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (23459/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	07/07/2011
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 20.10.2014 (DD(2014)1302)
Վարույթի ընթացքը	Փակված է 19/11/2014 (CM/ResDH(2014)225)
Կատարման վիճակը	Կատարված է

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացրած վճռում Դատարանն արձանագրել է, որ «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամի դատապարտումը և պատժումը, որպես զինվորական ծառայությունից խուսափող անձ, այն դեպքում, երբ անձը հրաժարվել է զինվորական ծառայությունից խղճի և համոզմունքների պահանջների կապակցությամբ, հակասում է ժողովրդավարական հասարակությունում խղճի և կրոնի ազատության պաշտպանությանը:

Սույն գործով Դատարանի վճռի կատարման վերաբերյալ ՀՀ 2014 թ. նոյեմբերի 19-ին ներկայացրել է թիվ CM/ResDH(2014)225 Գործողությունների ծրագիրը, որով տեղեկատվություն է ներկայացրել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների մասին, և օրենքի կիրառման արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Այս առումով «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ներկայացրած Գործողությունների ծրագիրը կարելի է համարել օրինակելի, քանզի դրանով ներկայացվել է տեղեկատվություն ոչ միայն Կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումների և դրանց արդյունքների և ելքերի մասին, այլ նաև տեղեկատվություն է ներկայացվել իրականացված գործողությունների՝ իրական (ռեալ) արդյունքների, այսինքն՝ ազդեցության մասին: Նման պայմաններում առավել ակներև են Կառավարության կողմից իրականացրած գործողությունների արդյունքները և առավել դյուրին է գնահատել այդ գործողությունների արդյունավետությունը:

Չնայած քաղաքացական այլընտրանքային ծառայություն անցնելու հիմնախնդրի լուծման շրջանակներում լուծում չի տրվել ծառայություն անցնող քաղաքացիների այլընտրանքային ծառայություն անցնելու իրավունքին այնուամենայնիվ տվյալ խնդիրն ընդհանուր առմամբ կարելի է համարել լուծված:

Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի (37819/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/04/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 20.10.2014 (DD(2014)1302)
Վարույթի ընթացքը	Փակված է 19/11/2014 (CM/ResDH(2014)225)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի (37821/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/04/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 20.10.2014 (DD(2014)1302)
Վարույթի ընթացքը	Փակված է 19/11/2014 (CM/ResDH(2014)225)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

ՄԻԵԿ 10-րդ հոդված՝ Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:
2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 8-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 1 գործով, որը կազմում է բավարարված գործերի 1 %: Այդ գործն է.

Մելտեքս ՍՊԸ ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի 32283/04

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՄԻԵԴ կողմից տվյալ հոդվածի խախտում արձանագրվել է միայն մեկ գործով: Այն վերաբերել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի գործունեությանը: Խնդրի պատճառ հանդիսացած օրենսդրության մեջ կատարվել է փոփոխություն, ուստի նաև վճիռը ճանաչվել է կատարված: Այնուամենայնիվ ՀՌԱՀ գործունեության թափանցիկությունը և անկախությունը դեռևս մտահոգիչ են[71]:
Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ մի շարք գործերով Դատարանի կողմից 10-րդ հոդվածը պետք է ընդունել որպես lex generalis 11-րդ հոդվածի lex specialis նորմի

[71] Տե՛ս Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին , Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ (էջ 20)
http://www.osf.am/wp-content/uploads/2015/04/UPR_FFHR_Volume-I.pdf

նկատմամբ: Ուստի թեև գործը քննվել է մասնավորապես 11-րդ հոդվածի պահանջների լույսի ներքո, սակայն Դատարանն արձանագրել է, որ 10-րդ հոդվածով երաշխավորված անձնական կարծիքների պաշտպանությունը 11-րդ հոդվածով նախատեսված խաղաղ հավաքների ազատության նպատակներից մեկն է: Ուստի տվյալ գործերով 11-րդ հոդվածի խախտումները ևս անհրաժեշտ է դիտարկել որպես արտահայտվելու ազատության խախտում:



Գծապատկեր 12

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Մելտեքս ՍՊԸ ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի (32283/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17/09/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 08/06/2011 (CM/ResDH(2011)39)
Վարույթի ընթացքը	Փակված է 08.06.2011 (CM/ResDH(2011)39)
Կատարման վիճակը	Կատարված է

Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը անդրադառնալով հոդվածում կիրառվող «նախատեսված է օրենքով» արտահայտությանը, արձանագրել է, որ արտոնագրման այն ընթացակարգը, որով արտոնագրող մարմինը՝ ՀՌԱՀ չի պատճառաբանում իր որոշումները (տվյալ դեպքում հեռարձակման արտոնագրի տրամադրման մերժման վերաբերյալ), պետական մարմնի կողմից խոսքի ազատության հիմնարար իրավունքին կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն չի ապահովում, ուստի նաև չի համապատասխանում օրենքի որակին առաջադրվող և օրինականության պահանջին:

Սույն գործով վճռի կատարման գործընթացը փակելու վերաբերյալ 2011 թ. հունիսի 6-ի ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/ResDH(2011)39 Եզրափակիչ բանաձևի մեջ ներառված ՀՀ կառավարության ներկայացված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ որպես վճռի կատարման հիմք ընդունվել է այն հանգամանքը, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 49 –րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է և սահմանվել է, որ Լիզենզավորման մրցույթում հաղթող ճանաչելու մասին Ազգային հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատշաճ հիմնավորված և պատճառաբանված: Թե որքանով է գործնականում ապահովվել այս պահանջը Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի գործունեությունը՝ համաձայն վերոնշյալ չափորոշիչների, ՀՀ կառավարության կողմից տեղեկատվություն չի

տրամադրվել:
Այնուամենայնիվ ՀՌԱՀ գործունեության թափանցիկությունը և անկախությունը դեռևս մտահոգիչ են[72]:

ՄԻԵԿ 11-րդ հոդված՝ Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:
2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

2015 թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 8-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 11 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 7 %: Այդ գործերն են.

Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի 6562/03
Գալստյանն ընդդեմ Հայաստանի 26986/03
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի 33268/03
Ամիրյանն ընդդեմ Հայաստանի 31553/03
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի 1 35944/03
Սափեյանն ընդդեմ Հայաստանի 35738/03
Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 34320/04
Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի 59109/08

Նշված գործերով կայացված վճիռներով Դատարանի կողմից արձանագրված հիմնական խախտումը հանգեցրել է քաղաքացիների ազատության սահմանափակման, կամ պատասխանատվության միջոցների կիրառման միջոցով հավաքների մասնակցության

[72] Տե՛ս Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին , Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ (էջ 20)
http://www.osf.am/wp-content/uploads/2015/04/UPR_FFHR_Volume-I.pdf

նրանց հնարավորությունների սահմանափակմանը, կամ հավաքների մասնակցության համար պատժելուն: Մեկ այլ գործ (Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի) վերաբերել է հավաքի արտոնման և անցկացման խոչընդոտելու հիմնախնդրին:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին կազմակերպված հավաքների ընթացքում պետական և, մասնավորապես, իրավապահ մարմինների կողմից դրսևորած վարքագիծը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ չնայած իրականացրած լայնածավալ օրենսդրական փոփոխություններին, իրավիճակը մեծ առումով չի փոփոխվել և անձանց հավաքների ազատության նմանատիպ սահմանափակումները դեռևս տեղի են ունենում:



Գծապատկեր 13

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Գալստյանն ընդդեմ Հայաստանի (26986/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15/02/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 172-րդ հոդվածի (Մանր խուլիգանություն) հիման վրա անձին պատասխանատվության ենթարկելը ցույցին մասնակցելու ընթացքում «փողոցային երթևեկությանը խոչընդոտելու» և «բարձրաձայն աղմկելու» համար, ինչի արդյունքում անձը հնարավորություն չի ունեցել մասնակցել ցույցին, հակասել է հավաքների ազատության սահմանափակման «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պայմանին:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ տե՛ս Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (33268/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/12/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի (6562/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/04/2007
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 27.03.2008 (CM/ResDH(2008)2)
Վարույթի ընթացքը	Փակված է 27.03.2008 (CM/ResDH(2008)2)
Կատարման վիճակը	Կատարված է

Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ անձին պատասխանատվության ենթարկելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180-րդ հոդվածի հիման վրա, հղում կատարելով «սահմանված կարգ»-ի խախտմանը, այն պայմաններում, երբ նշված կարգը սահմանված չէ որևէ իրավական ակտով,

հանդիսանում է խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունքի միջամտության՝ օրենքով սահմանված լինելու պահանջի խախտում:

Սույն գործով վճռի կատարման քննությունը փակվել է ԵԽ նախարարների կոմիտեի կողմից 2008 թ. մարտի 27-ի թիվ CM/ResDH(2008)2 Եզրափակիչ բանաձևով: Եզրափակիչ բանաձևի հավելվածով ներկայացված է նաև ՀՀ կառավարության կողմից ներկայացված տեղեկատվությունը վճռի կատարման վերաբերյալ. ՀՀ կառավարությունը հայտնել է 2004 թ. ապրիլի 28-ին «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի ընդունման մասին[73]:

Նշված վճռով արձանագրված խախտման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները կարելի է գնահատել կատարված:

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (No.1) (35944/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/04/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

[73] Օրենքը այժմ չի գործում, քանի որ 2011 թ. ապրիլի 11-ին ընդունվեց «Հավաքների ազատության մասին» ՀՀ նոր օրենք:

Ամիրյանն ընդդեմ Հայաստանի (31553/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/04/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Սափեյանն ընդդեմ Հայաստանի (35738/03)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/04/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (34320/04)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի (182. Միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժիննիկի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը[74]) հիման վրա Դիմումատուների կարճաժամկետ կալանքի ենթարկելը տեղի էր ունեցել ցույցերին նրանց մասնակցությունը կանխելու կամ խափանելու նպատակով: Կալանքը կիրառվել էր իրավական մի դրույթի հիման վրա, որը որևէ առնչություն չուներ այդ միջոցառման նախօրոք հաղորդած նպատակի հետ, ուստի միջամտությունը չի համապատասխանում օրինականության պահանջին:

Սույն գործով ՀՀ կառավարությունը 2015 ապրիլի 16-ին թիվ ներկայացրել է թիվ DD(2015)434 Գործողությունների զեկույցը: Գործողությունների զեկույցով ՀՀ կառավարությունը վկայակոչել է 2011 թ. ապրիլի 14-ին ընդունված «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180.1 հոդվածի կարգավորումները վերաբերյալ, որոնցով սահմանվում են հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելու հետ կապված իրավահարաբերությունները:

Չնայած տրամադրված տեղեկատվությանը, անհրաժեշտ է նշել, որ վարչական և քրեական ներգործության տարբեր միջոցների կիրառմամբ անձանց հավաքներին մասնակցելու խոչընդոտելու պրակտիկան դեռևս պահպանված է, ուստի նաև հավաքների ազատության իրավունքը դեռևս լիարժեք պաշտպանված չէ, և հետևաբար տվյալ գործով արձանագրված խախտումը ամբողջությամբ վերացված չէ: Սույն խնդրի վերաբերյալ լրացուցիչ տես նաև

[74] Դեպքի ժամանակահատվածում առկա խմբագրությամբ (2004 թ.)

Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված թիվ DH-DD(2016)213E տեղեկանքը:
Այս մասով վճիռը կատարված չի կարելի համարել:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի (59109/08)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Հայաստանի հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Դիմումատու կազմակերպությանը երթ անցկացնելու արգելելը այն պատճառով, թե հետընտրական հավաքները հանգեցրել էին բախումների և մարդկային զոհերի, որոնց ուղղությամբ քննությունը դեռևս շարունակվում է, և հանցագործություն կատարած բոլոր անձինք չէին բացահայտվել կամ ամբողջ զենքը չի հայտնաբերվել, չի բավարարում «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պայմանին: Դատարանը իր որոշումը հիմնավորել էր այն հանգամանքով, որ երթը նախատեսվում էր անց կացնել հետընտրական բախումներից ավելի քան երկու և ՀՀ նախագահի կողմից հայտարարված արտակարգ դրության ժամկետի ավարտից ավելի քան մեկ ամիս անց, չկար որևէ ապացույց, որ կվկայեր այն մասին, որ ծրագրված երթի կազմակերպիչները կամ մասնակիցները որևէ կերպ ներքաշված են եղել հետընտրական անկարգությունների կամ բռնության մեջ, կամ ծրագրված երթի կազմակերպիչները կամ մասնակիցները բռնություն գործադրելու մտադրություններ են ունեցել, կամ որ երթը կարող էր որևէ այլ պատճառով վերածվել զանգվածային անկարգությունների:
Սույն գործով ՀՀ կառավարությունը դեռևս Գործողությունների ծրագիր և հետևաբար որևէ վիճակագրական տվյալներ իրավիճակի փոփոխման վերաբերյալ չի ներկայացրել:

ՄԻԵԿ 12-րդ հոդված՝ Ամուսնության իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Ամուսնության իրավունքի խախտում ՀՀ դեմ կայացված վճիռներով ՄԻԵԿ կողմից 2007-2015 թթ-ին չի արձանագրվել:

ՄԻԵԿ 13-րդ հոդված Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 13-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 3 գործով, ինչը կազմում է բավարարված գործերի 3 %: Այդ գործերն են.

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի 22999/06
Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի 59109/08
Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի 13216/05

Սույն հոդվածի խախտման վերաբերյալ կայացված վճիռներում Դատարանի կողմից հիմնականում արձանագրվել է բարոյական վնասի փոխհատուցման և գործնականում իրավունքի պաշտպանության միջոցի արդյունավետության հիմնախնդիրները:
Չնայած առաջինի դեպքում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, այնուամենայնիվ ՀՀ կառավարության կողմից դեռևս չեն ներկայացվել վիճակագրական տվյալներ օրենսդրության դրույթների կիրառման վերաբերյալ:



Գծապատկեր 14

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի 22999/06

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	12/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 12.08.2013 (DD(2013)851)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ, հաշվի առնելով, որ Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորություն, Դիմումատուն զրկված է եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու

հնարավորությունից:

Սույն գործով ՀՀ կառավարությունը 2013 թ. օգոստոսի 12-ին ներկայացրել է թիվ DD(2013)851 Գործողությունների ծրագիրը, որով տեղեկատվություն է տրամադրել ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մասին:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի լրացումը որոշ բացերով կատարվել է 2014 թ. մայիսի 19-ին թիվ ՀՕ-21-Ն նախագծով, և լրամշակվել 2015 թ. դեկտեմբերի 21-ին թիվ ՀՕ-184-Ն նախագծով: Նշված լրացումով սահմանվել է անձի, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսնու, ծնողի, որդեգրողի, երեխայի, որդեգրվածի, խնամակալի, հոգաբարձուի իրավունքը դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում: Թեև առկա չեն վիճակագրական տվյալներ նշված դրույթի կիրառման վերաբերյալ, այնուամենայնիվ նշված մասով վճիռը կարելի է գնահատել իրականացված:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի 59109/08

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 30/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է պայմանականորեն

Հայաստանի հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ թեև տեսականորեն Դիմումատու կազմակերպությունը իր տրամադրության տակ ուներ իրավական պաշտպանության միջոց, սակայն գործնականում զրկված է եղել այդ պաշտպանության միջոցից, քանզի քաղաքապետի որոշումը Դիմումատուին է հանձնվել սահմանված ժամկետներից ուշ՝ միջոցառման անցկացման հաջորդ օրը: Իսկ իրավական պաշտպանության այլ արդյունավետ միջոցների առկայությունը

չի ապացուցվել:
Սույն գործով կայացրած վճռի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագիր դեռևս չի ներկայացվել:

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի 13216/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	16/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 16/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով կայացրած վճռում Դատարանն արձանագրել է, որ Կառավարությանը չի հաջողվել հիմնավորել, որ Դիմումատուներին հասանելի են եղել բողոքարկվող իրավունքների վերականգման և հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարներ ունեցող միջոցներ, ուստի և առկա է 13-րդ հոդվածի շարունակական խախտում:

Սույն գործով ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագիր կամ զեկույց չի ներկայացվել:

ՄԻԵԿ 14-րդ հոդված՝ Խտրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից,

ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 14-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 1 գործով, որը կազմում է բավարարված գործերի 1 %: Այդ գործն է.

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի 40094/05

14-րդ հոդվածի խախտում ճանաչվել է միայն մեկ գործով, այն էլ 14-րդ հոդվածի ընթացակարգային կողմի խախտում՝ զուգակցված 3-րդ հոդվածի հետ: Սույն գործով կայացված վճռի կատարման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները ուղղակիորեն կապված են նաև երկրում խտրականության դեմ պայքարի ոլորտում համակարգային օրենսդրական և իրավակիրառ բնույթի միջոցառումների իրականացման հետ:



Գծապատկեր 15

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի 40094/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.02.2015 (DD(2015)206) 25.02.2014 (DD(2014)328)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ Պետական մարմինների կողմից չեն ձեռնարկվել բավարար միջոցներ պարզելու, թե արդյոք Դիմումատուի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ցուցաբերվել է քաղաքական հայացքների և գործունեության հիմքով խտրականության պատճառով:

Սույն գործով վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 2 Գործողությունների ծրագիր 2014թ. փետրվարի 25ին թիվ DD(2014)328 և 2015 թ. փետրվարի 16-ին թիվ DD(2015)206): Սույն Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը հայտնել է ՀՀ քրեական օրենսգրքով խոշտանգում հանցակազմի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան սահմանման, ինչպես նաև Հայաստանում հակախտրականության ոլորտում համապարփակ օրենսդրության ընդունման մտադրության մասին: Թեև թիվ DD(2014)328 գործողությունների ծրագրում ՀՀ կառավարությունը նշում է, որ տվյալ խնդիրը առավելապես իրավակիրառ պրակտիկայի խնդիր է, և կապված չէ օրենսդրական կարգավորումների հետ: Այնուամենայնիվ ՀՀ կառավարությունը չի ներկայացրել վիճակագրական տվյալներ՝ իրավապահ մարմինների կողմից նմանատիպ պրակտիկայի փոփոխության վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ հակախտրականության ոլորտում համապարփակ օրենսդրություն դեռևս ընդունված չէ, ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգում հանցակազմի սահմանման շրջանակներում որպես վատ վերաբերմունքի հիմք խտրականության հիմքը սահմանելու արդյունավետությունը չափված չէ, և Կառավարության կողմից չեն ներկայացվել

վիճակագրական տվյալներ այս մասով վճիռը կատարված չի կարելի համարել:

ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:
Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում է ճանաչվել թվով 12 գործով, որոնք կազմում են բավարարված գործերի 13 %: Այդ գործերն են.

Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի 27651/05
Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի 5065/06
Երանոսյանն և այլոք ընդդեմ Հայաստանի 13916/06
Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի 31761/04
Անտոնյանն ընդդեմ Հայաստանի 3946/05
Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 25825/05
Թունյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 22812/05
Բաղդասարյանը և Զարիկյանցը ընդդեմ Հայաստանի 43242/05
Ղասաբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 23566/05
Ղարիբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 19940/05
Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի 13216/05
Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի 22343/08

Նշված գործերով արձանագրվել են օրինական ուժի մեջ մտած վճռի լիարժեք կատարումը չապահովելու արդյունքում անձի իր գումարից անարգել օգտվելու իրավունքի խախտում, «օրենքով սահմանված կարգով» պայմանի խախտմամբ պետական կարիքների համար գույքի (սեփականության) օտարման, և կամայական կերպով բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցման, գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտում: Թեև նշված գործերով կայացված վճիռների մեծ մասի կատարման վարույթը փակված է, ոլորտը ենթարկվել է առավել հստակ օրենսդրական կարգավորումների: Սակայն պետք է արձանագրել, որ ՀՀ-ում դեռևս լուծված չի կարելի համարել պետական կարիքների համար սեփականության օտարման հետ կապված խնդիրները:



Գծապատկեր 16

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի 31761/04

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/03/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 18.11.2014 (DD(2014)1419) 16.02.2015 (DD(2015)207)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)37)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ պետության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ Դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարման ուղղությամբ, ինչի արդյունքում խոչընդոտվել է Դիմումատուների գումարն ամբողջությամբ ստանալը: Հետևաբար տեղի է ունեցել իրենց գույքից անարգել օգտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն:

Վճռի կատարման վերաբերյալ տե՛ս Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ մեկնաբանությունը:

Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի 27651/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	23/09/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088) 22.04.2015 (DD(2015)484) 30.05.2014 (DD(2014)776)

	21.05.2013 (DD(2013)583)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Մինասյանը և Սեմերջյանը ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ առաջին Դիմումատուի դեպքում պետական կարիքների համար գույքի (սեփականության) օտարումը տեղի է ունեցել ոչ «օրենքով սահմանված կարգով», իսկ երկրորդ Դիմումատուի դեպքում նաև բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցումը կատարվել է կամայական կերպով:

Սույն գործով ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 4 գործողությունների ծրագրեր և զեկույց. 2013 մայիսի 21-ին թիվ DD(2013)583, 2014 մայիսի 30-ին թիվ DD(2014)776, 2015 թ. 2015 թ. ապրիլի 22 թիվ DD(2015)484, հոկտեմբերի 14-ին DD(2015)1088: Իսկ 2015 թ. մարտի 12-ի թիվ CM/ResDH(2015)191 եզրափակիչ բանաձևով գործով վճռի կատարման քննությունը ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից փակվել է:

Թիվ DD(2015)1088 Գործողությունների զեկույցով ՀՀ կառավարությունը տեղեկատվություն է ներկայացրել ձեռնարկված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ (2006 թ. ապրիլի 18-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը): Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը վկայակոչել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18-ին թիվ ՍԴՈ-630 որոշմամբ արձանագրված դիրքորոշումը:

Ողջունելի է, որ տվյալ Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարության կողմից նաև ներկայացվել են վիճակագրական տվյալներ՝ դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, չնայած ներկայացրած տեղեկատվությանը, պետք է արձանագրել, որ հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման գործընթացում ՀՀ-ում անձանց սեփականության իրավունքը դեռևս լիարժեք պաշտպանված չէ, գործընթացը ուղեկցվում է կամայական մոտեցումներով: Պետության կողմից չեն տրվում երաշխիքներ, իրենց սեփականությունից զրկված անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու համար[75]:

[75] Տե՛ս Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին (Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ), էջ 28-30

Ուստի չնայած այն հանգամանքին, որ սույն գործով վճռի կատարման գործընթացը փակվել է, այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ այն ամբողջությամբ կատարված չէ:

Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի 5065/06

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20/10/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088) 22.04.2015 (DD(2015)484)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Հովհաննիսյանը և Շիրոյանը ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Դիմումատուի դեպքում նաև բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցումը կատարվել է կամայական և անօրինական կերպով:

Վճռի կատարման վերաբերյալ տե՛ս Մինասյանը և Սեմերջյանը ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունները:

Երանոսյան և այլոք ընդդեմ Հայաստանի 13916/06

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20/10/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088) 22.04.2015 (DD(2015)484) 30.05.2014 (DD(2014)776) 21.05.2013 (DD(2013)583)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի 13216/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	16/06/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Վեցամսյա ժամկետը լրացել է 16/12/2015
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված չէ

Չիրագովն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ անկախ այն հանգամանքից, թե արդյոք Դիմումատուների տները դեռևս կանգուն են, թե ոչ,

թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «գույք» հանդիսացող հողամասերի նկատմամբ նրանց բոլորի իրավունքները, այդուհանդերձ, պահպանվել են, ուստի Դիմումատուներին շարունակաբար իրենց գույքի հասանելիությունից զրկելը (ինչի արդյունքում նրանք կորցրել են իրենց գույքը վերահսկելու և դրանից օգտվելու հնարավորությունը) հանդիսանում է անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտում:

Սույն գործով ՀՀ կառավարության կողմից Գործողությունների ծրագիր կամ զեկույց չի ներկայացվել:

Ղարիբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 19940/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/02/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մինասյան և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը

Ղասաբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 23566/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/02/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մինասյան և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Բաղդասարյանը և Զարիկյանցը ընդդեմ Հայաստանի 43242/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13/02/2015
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մինասյան և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 25825/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	09/01/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088) 22.04.2015 (DD(2015)484)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մինասյան և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Թունյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 22812/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 14.10.2015 (DD(2015)1088) 22.04.2015 (DD(2015)484) 24.03.2015 (DD(2015)383) 02.01.2014 (DD(2014)308)
Վարույթի ընթացքը	Փակված է 12.03.2015 (CM/ResDH(2015)191)
Կատարման վիճակը	Կատարված չէ

Տե՛ս Մինասյան և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Անտոնյանն ընդդեմ Հայաստանի 3946/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11/02/2013
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 25.12.2013 (DD(2014)121) 10.03.2014 (DD(2014)325) 13.11.2014 (DD(2014)1395)
Վարույթի ընթացքը	Փակված է 18.02.2015 (RES(2015)18)
Կատարման վիճակը	Կատարված է

Անտոնյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ այն ձևը, որով ներպետական մարմինները մերժել են Դիմումատուի բնակարանի հաշվառումից հանել Դիմումատուի զարմուհու երեխաներին (որոնք բնակվում էին իրենց հոր հետ այլ քաղաքում), հղում կատարելով ՀՀ կառավարության որոշմանը և պահանջելով փոխհատուցում վճարել երեխաներին, հանգեցրել է ներպետական օրենսդրության անկանխատեսելի կիրառման և չի համապատասխանում իրավաչափության և օրենքի գերակայության սկզբունքին:

Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է թվով 3 գործողությունների ծրագիր՝ 2014 նոյեմբերի 13-ին թիվ DD(2014)1395, 2014 մարտի 10-ին թիվ DD(2014)325, 2013 թ. դեկտեմբերի 25-ին թիվ DD(2014)121: Իսկ 2015 թ. փետրվարի 18-ի թիվ RES(2015)18 Եզրափակիչ բանաձևով ԵԽ նախարարների կոմիտեի կողմից գործի քննությունը փակվել է: Ներկայացված գործողությունների ծրագրերում ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ 2010 թ. կատարվել են փոփոխություններ, որոնց ուժով մերժման հիմք հանդիսացող դրույթները կորցրել են ուժը: Իսկ անձի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2005 թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ, որի 8.1 կետով սահմանվում է, որ անձը հաշվառումից հանվում է սեփականատիրոջ դիմումի կամ դատարանի վճռի հիման վրա: Միևնույն ժամանակ նույն վճռով սահմանված է, որ ռեգիստրում անչափահաս երեխան հաշվառվում է ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում՝ անկախ բնակելի տարածության սեփականատիրոջ համաձայնությունից (21-րդ կետ): Հաշվի առնելով, որ տվյալ հարցի շուրջ օրենսդրական կարգավորումները ձեռք են բերել որոշակիություն, խնդիրը կարելի է համարել լուծված:

Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի 22343/08

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Դեռևս ուժի մեջ չի մտել
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	----
Վարույթի ընթացքը	-----
Կատարման վիճակը	-----

Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքը ճանաչող վերջնական դատական վճիռը կարող է համարվել «գույք»՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Ուստի Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը նախկինում վերադարձնելուց հետո, կրկին բերված բողոքը առանց որևէ իրավական հիմքի վարույթ ընդունելը, քննելը և բավարարելը, ինչի արդյունքում բեկանվել է վերոնշյալ սեփականության իրավունքը ճանաչող վերջնական դատական վճիռը եղել է ոչ իրավաչափ:

ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 1-ին արձանագրության 3-ին հոդվածի խախտում է ճանաչվել թվով 1 գործով, որը կազմում է բավարարված գործերի 1 %: Այդ գործն է.

Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի 38978/03

Նշված վճռով Դատարանի կողմից արձանագրվել է, որ պատգամավորի թեկնածուի գրանցումը անվավեր է ճանաչվել ոչ իրավաչափ կերպով, ինչի պատճառ են հանդիսացել թե

օրենսդրական կարգավորումները, թե դատարանի կողմից օրենքի ֆորմալ մեկնաբանությունը: Խախտման հիմքում ընկած օրենսդրությունը փոփոխվել է:



Գծապատկեր 17

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի 38978/03

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/08/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.07.2014 (DH-DD(2014)965)
Վարույթի ընթացքը	Փակված է 10.09.2014 (CM/ResDH(2014)108)
Կատարման վիճակը	Կատարված է

Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանը հանգել է այն եզրակացության, որ Դիմումատուի պատգամավորի թեկնածության գրանցումն անվավեր ճանաչելը այն հիմքով, որ նա սեփականության հայտարարագրում կեղծ տեղեկատվություն է ներկայացրել, անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին, քանի որ Դիմումատուի դիտավորությունը հիմնավորող համոզիչ ապացույցները բացակայում էին, առկա էին նրա սխալն արդարացնող օբյեկտիվ և բավարար պատճառներ և նրա սեփականության իրավունքի բաժինը (որը նա չէր հայտարարագրել) չնչին էր:

Սույն գործի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից 2014 թ. հուլիսի 16-ին ներկայացվել է թիվ DH-DD(2014)965 Գործողությունների զեկույցը: Գործով վճռի կատարման քննությունը փակվել է ԵԽ նախարարների կոմիտեի 2014 թ. սեպտեմբերի 10-ի թիվ CM/ResDH(2014)108 եզրափակիչ բանաձևով: Նշված Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը հայտնել է, որ 2011 թ. հունիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով թեկնածուի գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացումը այլև չի հանդիսանում թեկնածուի գրանցման նախապայման, քանզի հայտարարագիրը ներկայացվում է թեկնածուի գրանցումից հետո, այլ ոչ մինչ գրանցումը: Միևնույն ժամանակ Ընտրական օրենսգրքով նախատեսված չէ որևէ պատասխանատվության միջոց տեղեկատվություն չներկայացնելու համար, իսկ պահանջը պարզապես ծառայում է թափանցիկության ապահովման նպատակին:

Չնայած Գործողությունների ծրագրում նշված օրենսդրական փոփոխություններին, որոնք թեև վերացնում են հետագայում նման խախտման վտանգը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ սույն գործով խախտումը մեծապես տեղի է ունեցել դատարանների կողմից ֆորմալ և իրավունքի ոչ բովանդակային կիրառման արդյունքում:

ՄԻԵԿ թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում

1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:
2. Այդ իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ, կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 7-ին արձանագրության 2-ին հոդվածի խախտում է ճանաչվել թվով 8 գործով, որոնք կազմում են բավարարված գործերի 9 %: Այդ գործերն են.

Գալստյանն ընդդեմ Հայաստանի 26986/03
Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի 41698/04
Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի 22390/05
Աշուղյանն ընդդեմ Հայաստանի 33268/03
Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 34320/04
Կարապետյանն ընդդեմ Հայաստանի 22387/05
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (No. 2) 22571/05
Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի 31237/03

Նշված գործերով կայացված բոլոր վճիռներում Դատարանն արձանագրել է միևնույն խնդիրը. Վարչական կալանքի կիրառման որոշման վերադաս դատարանի կողմից վերանայման ընթացակարգերի անորոշությունը: Հաշվի առնելով, որ վարչական կալանքի ինստիտուտը վերացել և Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվել են բողոքարկման հստակ մեխանիզմներ, սույն հիմնախնդիրը լուծվել է:



Գծապատկեր 18

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Գալստյանն ընդդեմ Հայաստանի 26986/03

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15/02/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 294-րդ հոդվածով նախատեսված վերանայման ընթացակարգը անձին չէր ընձեռում բողոքարկելու հստակ և մատչելի իրավունք: Վերադաս դատարանի նախագահի՝ որոշումը վերանայելու իրավունքը չուներ որևէ հստակ ձևակերպված ընթացակարգ կամ ժամկետներ, և չկար դրա կիրառության հետևողական պրակտիկա:

Սույն գործով կայացված վճռի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարությունը 2015 թ. ապրիլի 16-ին ներկայացրել է թիվ DD(2015)434 Գործողությունների ծրագիր: Ներկայացված Գործողությունների ծրագրով ՀՀ կառավարությունը հայտնել է վարչական կալանքի ինստիտուտի վերացման և ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքի ընդունման մասին: Վերջինով սահմանվել են մի շարք երաշխիքներ, որոնք ապահովում են, որպեսզի վարչական դատավարության համապատասխանությունը ընդհանուր դատավարական ընթացակարգերին, և հիմնարար դատավարական իրավունքները:

Սույն մասով վճիռը կարելի է գնահատել կատարված:

Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի 34320/04

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10/07/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2) 22571/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	16/09/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի 31237/03

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Թաղևոսյանն ընդդեմ Հայաստանի 41698/04

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Կարապետյանն ընդդեմ Հայաստանի 22387/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	27/01/2010
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի 22390/05

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04/05/2009
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 03.07.2015 (DD(2015)738) 18.11.2014 (DD(2014)1420) 09.04.2010 (Action report)
Վարույթի ընթացքը	Փակված է 04.11.2015 (CM/ResDH(2015)169)
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

Աշուղյանն ընդդեմ Հայաստանի 33268/03

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/12/2008
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 16.04.2015 (DD(2015)434)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը:

ՄԻԵԿ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում

Եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դեմ կայացված վճիռներով 7-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում է ճանաչվել թվով 1 գործով, որը կազմում է բավարարված գործերի 1 %: Այդ գործն է.

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի 22999/06

Սույն գործով Դատարանն արձանագրել է դատական սխալի հետևանքով դատապարտված անձին ոչ նյութական փոխհատուցման տրամադրման հիմնախնդիրը, որը կարելի է համարել լուծված, հաշվի առնելով 2015 թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները:



Գծապատկեր 19

Առանձին գործերի կատարման վիճակի ուսումնասիրություն

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի 22999/06

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	12/09/2012
Գործողությունների ծրագրի/զեկույցի ներկայացման ամսաթիվը	Ուշացումով 12.08.2013 (DD(2013)851)
Վարույթի ընթացքը	Փակված չէ
Կատարման վիճակը	Կատարված է

Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է, որ 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը սոսկ սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումը չէ, այլ նաև դատական սխալի հետևանքով դատապարտված անձին ոչ նյութական փոխհատուցման տրամադրումը: Ուստի այն դեպքում, երբ անձը դատապարտվել է դատական սխալի հետևանքով և երբ հետագայում այդ դատավճիռը չեղյալ է հայտարարվել ազգային դատարանների կողմից՝ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստի հիմքով, և անձը դիմել է փոխհատուցման (նյութական և ոչ նյութական վնասների), նման փոխհատուցում նրան չտրամադրելը խախտում է նշված հոդվածը:

Վճռի կատարման վերաբերյալ տե՛ս Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով մեկնաբանությունները:

Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մեխանիզմների ապահովման ուղղությամբ վերջին տարիներին կատարվել են մի շարք բարեփոխումներ: ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության կազմում ձևավորվել է Վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժին, շահագործման է հանձնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, որում առանձին բաժնով ներկայացված է տեղեկատվություն ՄԻԵԴ վճիռների կատարման ընթացքի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ վերջին տարիներին նաև ակտիվացել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման խթանման ուղղությամբ քաղաքացիական հասարակության գործունեությունը:

Այնուամենայնիվ դեռևս չի կարելի պնդել, որ ՀՀ-ում գործում են ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ապահովման բավարար մեխանիզմներ: Մասնավորապես դեռևս ապահովված չեն Եվրոպական դատարանի վճիռների կատարման հանդեպ բավարար վերահսկողական մեխանիզմներ: ՀՀ Ազգային ժողովի համապատասխան՝ Պետական-իրավական հարցերի և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովները չունեն ՄԻԵԴ վճիռների կատարման հանդեպ վերահսկողություն իրականացնելու լիազորություններ, և իրենց սահմանված լիազորությունների շրջանակներում գրեթե չեն անդրադառնում ՄԻԵԴ վճիռների լիարժեք և բովանդակային կատարման հիմնախնդիրներին:

Չնայած ՄԻԵԴ վճիռներով արձանագրված խախտումները լուծում են ստացել, որոշ դեպքերում նույնիսկ մինչ ՄԻԵԴ կողմից վճռի կայացումը, ՀՀ վճռաբեկ դատարանի կամ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշումների միջոցով, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ ՀՀ դատական իշխանության անկախության բացակայությունը բացասական է ազդում ՀՀ դատարանների կողմից ՄԻԵԴ դիրքորոշումների ուղղակի կիրառման վրա, որն իր հերթին հակասում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին:

Համեմատաբար քիչ մտահոգություններ են առկա ՀՀ կողմից ՄԻԵԴ վճիռներով նախատեսված անհատական բնույթի միջոցառումների իրականացման, ներառյալ արդարացի փոխհատուցումների տրամադրման հետ կապված:

Հիմնական մտահոգությունները կապված են ՄԻԵԴ վճիռներով արձանագրված համակարգային բնույթի խնդիրներին ոչ լիարժեք լուծում տալու գործելաոճի հետ: Մասնավորապես, մի շարք գործերով Պետության կողմից առաջին հայացքից իրականացվել

են համակարգային օրենսդրական փոփոխություններ, կրթական միջոցառումներ, իրականում այդ փոփոխությունների և գործողությունների ազդեցությունը կոնկրետ իրավունքի պաշտպանության վիճակի վրա արդյունավետ չէ: Նման դեպքերում կոնկրետ խախտման վերաբերյալ վճիռների կատարումը գնահատվել է «Կատարված է՝ պայմանականորեն»: Որոշ դեպքերում վճիռների կատարման ուղղությամբ իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում իրական որևէ փոփոխություն չի կատարվել և նշված իրավունքը շարունակում է խախտվել: Նման դեպքերում, անկախ այն հանգամանքից, թե ԵԽ նախարարների կոմիտեի կողմից վճռի կատարման վարույթը գնահատվել է փակված թե ոչ, մեր կողմից նշված խախտման մասով տրվել է «Կատարված չէ» գնահատականը (Տե՛ս Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ մեկնաբանությունը (թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված)):

Ուսումնասիրված 55 վճիռներից փակվել են 38ճը, որոնցից 6-րդ հոդվածով՝ 11 վճիռ, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով՝ 9 վճիռ, թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածով՝ 8 վճիռ: Նշված 55-ից վճիռներով արձանագրվել են թվով 93 խախտում, որոնցից առավելագույնը. 6-րդ հոդվածով՝ 24 խախտում, 5-րդ հոդվածով՝ 21 խախտում, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով՝ 12 խախտում, 3-րդ հոդվածով՝ 9 խախտում: Նշված խախտումից բավարար միջոցառումներ են իրականացվել 36-ի ուղղությամբ: (Տե՛ս Գծապատկեր 20, 21, 22)



Գծապատկեր 20.



Գծապատկեր 21.



ՀՀ վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռների կատարման ուղղությամբ դեռևս լուծում են պահանջում հետևյալ իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները.

ՄԻԵԿ 3-րդ հոդված՝

- Քրեակատարողական հիմնարկներում ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրումը,
- Ձերբակալվածների պահման վայրերում և քրեակատարողական հիմնարկներում արժանապատվությունը նվաստացնող պահման պայմանները,
- ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգումների կիրառումը և իշխանությունների կողմից խոշտանգման դեպքերի վերաբերյալ ոչ արդյունավետ և ոչ պատշաճ քննության իրականացումը,

ՄԻԵԿ 5-րդ հոդված՝

- կալանքի կիրառման օրինականության չափանիշի, շարունակական կալանքի «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտումը,
- կալանավորման և կալանքի ժամկետի երկարաձգման համար «հիմնավոր և բավարար» ապացույցների բացակայությունը,
- կալանքի միջնորդությունների քննության ընթացքում կողմերի հավասարության խախտումը,
- քրեական գործերով քննության ողջամիտ ժամկետների խախտումը,
- կալանքը կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումների փաստական և իրավական լիարժեք հիմնավորվածության բացակայությունը,

ՄԻԵԿ 6-րդ հոդված՝

- քրեական գործի վարույթի տևողության ողջամիտ ժամկետների խախտում,
- խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործման արդյունքում դատավարությունը անարդար դարձնելը,
- վճռի փաստական և իրավական ոչ բավարար հիմնավորումները,

ՄԻԵԿ 8-րդ հոդված՝

- հատուկ ծառայությունների կողմից գաղտնալսման իրականացման ընթացակարգերի՝ ՄԻԵԿ չափորոշիչներին ոչ ամբողջությամբ համապատասխանելը,
- կոնֆլիկտի հետևանքով բռնի տեղահանված տուժած քաղաքացիների հիմնախնդիրը,

ՄԻԵԿ 10-րդ հոդված՝

- ՀՌԱՀ գործունեության ոչ լիարժեք թափանցիկությունը և անկախությունը,

ՄԻԵԿ 11-րդ հոդված՝

- քաղաքացիների ազատության սահմանափակման, կամ պատասխանատվության միջոցների կիրառման միջոցով հավաքների մասնակցության նրանց հնարավորությունների սահմանափակումը,

ՄԻԵԿ 14-րդ հոդված՝

- խտրականության դեմ պայքարի ոլորտում համակարգային օրենսդրական և իրավակիրառ բնույթի միջոցառումների բացակայությունը,

Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված՝

- պետական կարիքների համար գույքի (սեփականության) օտարման, և կամայական կերպով բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցման հիմնախնդիրները:

Առաջարկություններ

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները:

ԵԽ Նախարարների կոմիտեին.

- Առանձին գործերով վճռի կատարման գործընթացի վերաբերյալ գնահատական կազմելիս պահանջել բավարար տեղեկատվություն կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների ազդեցությունը գնահատելու նպատակով:
- Առանձին գործերով վճիռների կատարման վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվության առկայության դեպքում դիմել մարդու իրավունքների պաշտպանության ազգային կամ միջազգային հաստատություններին կամ վճռով Դիմումատուին խախտման հիմքերի վերացման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀՀ կառավարությանը.

- Ապահովել, որպեսզի ՀՀ գործադիր բոլոր մարմինների համապատասխան ծառայողներին ծանոթ լինեն ՀՀ վերաբերյալ կայացված ՄԻԵԴ վճիռներին և ուղղակիորեն կիրառեն դրանց մեջ արտահայտված դիրքորոշումները:

ՄԻԵԴ ՀՀ ներկայացուցչությանը և ՀՀ ԱՆ ՄԻԵԴ հետ կապերի վարչությանը:

- Պարբերաբար կազմակերպել և անց կացնել խորհրդակցություններ ՄԻԵԴ առանձին վճիռների կատարման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական հասարակայնության, ՄԻԵԴ վճիռներով Դիմումատուների և նրանց ներկայացուցիչների հետ:
- Գործողությունների ծրագրերի մշակմանը գործընթացին մասնակից դարձնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին.
- Ապահովել ՀՀ կողմից Գործողությունների ծրագրերի և Գործողությունների զեկույցների՝ հայերեն լեզվով հրապարակումը:
- Գործողությունների ծրագրերում և Գործողությունների զեկույցներում բացի տվյալ խախտման վերացման ուղղությամբ ձեռնարկված համակարգային բնույթի միջոցառումների ներկայացումից նկարագրել նաև այդ միջոցառումների ազդեցությունը իրավիճակի փոփոխության վրա:

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմին, պատգամավորներին, Պետական-իրավական հարցերի և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի և ԱԺ այլ մշտական հանձնաժողովներին:

- Պարբերաբար կազմակերպել հանրային լսումներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացի, խախտված ապահովման և պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ:
- Սահմանել ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչության՝ ՀՀ ԱԺ-ին գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացման և հրապարակման պահանջը:
- Սահմանել Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ԱԺ մշտական հանձնաժողովի լիազորությունը՝ վերահսկողություն իրականացնել ՀՀ կողմից ՄԻԵԴ վճիռների կատարման և օրենսդրական ակտերի նախագծերի՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքին համապատասխանության հանդեպ:

ՀՀ Դատարանների նախագահների խորհրդին, ՀՀ վճռաբեկ դատարանին, ՀՀ դատարանների

- Ապահովել գործերի քննության ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ուղղակի կիրառումը:
- Պարբերաբար ուսումնասիրել բոլոր ատյանների դատարանների կողմից ՄԻԵԴ դիրքորոշումների կիրարկման վիճակը՝ հրապարակելով ուսումնասիրության արդյունքները:
- ՄԻԵԴ դիրքորոշումների կիրարկման վիճակի բարելավման նպատակով ընդունել համապատասխան որոշումներ (ՀՀ դատարանների խորհրդին):

Ի լրումն վերոնշյալ առաջարկությունների, առաջարկվում է բավարար և ազդեցիկ միջոցներ ձեռնարկել <u>ՀՀ վերաբերյալ Եվրոպական վճիռների լիարժեք կատարման ուղղությամբ դեռևս լուծում պահանջող խնդիրների</u> լուծման ուղղությամբ (Տե՛ս Զեկույցի «Ամփոփում»):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

հասցե՝ ՀՀ, Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59
հեռ.՝ (+374 322) 4 22 68
ֆաքս՝ (+374 322) 4 12 36
կայքէջ՝ www.hcav.am
էլ. փոստ. hcav@hcav.am